

ԸՆՏՐՈՒՔԻՆ

Ի. Ի. հանրապետության նախագահական ընտրությունների առիթով

23 տարի առաջ (1979թ.) Այաթոլլահ Խոմենիի առաջնորդությամբ Իրանում վերջ տրեց երեք հազար տարի պատմություն ունեցող թագադրական կարգերին: Դրանից յետոյ էր, որ Իրանցիները իրենց պատմության ընթացքում առաջին անգամը լինելով՝ ներկայացան քաղաքական սնունդների մասնակցեցին նախագահական ընտրություններին: Ստորև ներկայացուցում է ամփոփ տեղեկություններ անցեալում կատարած նախագահական ընտրությունների մասին:

Առաջին շրջան՝ 1979թ.

Սոյն քաղաքի 23-24 յուևարին տեղի ունեցավ առաջին նախագահական ընտրությունը: Ակնառու թեկնածուներն էին՝ Ա. Բանիսադըրը՝ Ջ. Ֆարսին, Հ. Հաբիբին, Ա. Մադանին, Զ. Սամիին, Գ. Ֆուրուհարը, Ս. Գոթթադին և Մ. Մոքրին:

124 անձ մասնակցել էին ընտրությանը, որոնցից 8 հոգի մտան պայքարի մեջ: Այդ ընտրապայքարում հերթաբար ամենաշատ քվե շահեցին Բանիսադըրը՝ 10.7 միլիոն և Ա. Մադանին՝ 2.2 միլիոն:

Երկրորդ շրջան՝ 1981թ.

Բանիսադըրի փախուստից յետոյ կատարեց երկրորդ նախագահական ընտրությունը: Այս ընտրաշրջանում մասնակցեցին 70 թեկնածուներ, որոնցից միայն 4-ը վերջնական փուլին մասնակցելու իրաւունք ստացան: Արդիւնքում պրն. Այի Ռաջային 12722000 քվեով ընտրեց երկրի նախագահ: Սիւս թեկնածուները շահեցին հետեւեալ քվեները՝ Ա. Շէյրանի՝ 629000 քվե, Հ. Ասգարօղաի՝ 523000 քվե և Ա. Փարսաբէ 464000 քվե: Սակայն երկար չտեւեց Ա. Ռաջայիի նախագահական կեանքը: Նա շատ կարճ ժամանակից յետոյ ժամերի պայթիւնի գոհ դարձաւ:

Երրորդ շրջան՝ 1981թ.

44 թեկնածուներից 4-ը մասնակցեցին վերջին ընտրապայքարին: Այս շրջանում Այաթոլլահ Խոմենին 16 միլիոն քվեով ընտրեց երկրի նախագահ: Սիւս թեկնածուներն էին՝ Ա. Փարսաբէը, Ռ. Ջաւարէին և Հ. ԴաՖուրիՖարը:

Չորրորդ շրջան՝ 1985թ.

Այս շրջանում եւս նախագահ ընտրեց այաթոլլահ Խոմենին՝ 12 միլիոն քվե: Մահմուդ Քաշանին և Հաբիբոլլահ Ասգարօղաիին հերթաբար շահեցին 1.39 միլիոն և 282 հազար քվեներ:

Շինգերորդ շրջան՝ 1989թ.

Այս շրջանի ընտրության վերջին փուլում ընտրապայքարի մեջ մտան պարոնայք Այի Աքբար ՌաՖսանջանին և Աքբաս Շէյրանին: Արդիւնքում պրն. Ա. ՌաՖսանջանին քվեների մեծ տարբերությամբ ընտրեց երկրի նախագահ:

Վեցերորդ շրջան՝ 1993թ.

Պրն. Այի Աքբար ՌաՖսանջանին 10.5 միլիոն քվեով երկրորդ անգամ ընտրեց երկրի նախագահ: Ընտրապայքարի մեջ էին մտել նաեւ Ա. Թաւաքքոլին (շահել էր 4.2 միլիոն ձայն) և Արդոլլահ Ջաւարին (շահել էր 1.5 միլիոն ձայն):

Յօթերորդ շրջան՝ 1997թ.

Այս շրջանում նախագահ ընտրեց Մէյեղ Մոհամմադ Խաթամին 20 միլիոն ձայնով: Նրա այտոյեաններն էին Ռ. Ջաւարէին, Մ.Մ. Ռէշաիւրին և Ա. Նաթեղ Նուրին: Ընտրության արդիւնքում Մ. Խաթամուն ձայների առումով ամենամօտը Ա. Նաթեղ Նուրին էր՝ 7 միլիոն ձայն:

Ութերորդ շրջան՝ 2001թ.

Ընտրության վերջին փուլում մնացին 10 թեկնածուներ: Արդիւնքում՝ պարոն Ս. Մ. Խաթամին ձայների մեծ տարբերութեամբ՝ 21'659'053 քվե երկրորդ անգամ ընտրեց երկրի նախագահ:

Իրանում կատարած ընտրությունների վիճակագրություն

Ընտրություն	Ընտ. քաղաք	Ընդհ. քվե. թիւը
Հանրաքվե. կարգ. փոխելու նպատակով	1979	20439908
Բ. Խ. ընտր. կանոնագիրը. քաղաքականութեան համար	1979	10723788
Հանրաքվե. կանոնագիրը հաստատելու համար	1979	15690142
Նախագահական առաջին շրջանի ընտրություն	1979	14085243
Ի.Խորհրդարանի առաջին շրջանի ընտրություն	1979	10871645
Նախագահական 2-րդ շրջանի ընտրություն	1981	14532869
Նախագահական 3-րդ շրջանի ընտրություն	1981	16737381
Բանիմացների Խորհրդի առաջին շրջանի ընտրություն	1983	18140985
Ի.Խորհրդարանի 2-րդ շրջանի ընտրություն	1984	15822070
Նախագահական 4-րդ շրջանի ընտրություն	1985	14089468
Ի. Խորհրդարանի 3-րդ շրջանի ընտրություն	1988	16714281
Նախագահական 5-րդ շրջանի ընտրություն	1989	16409359
Հանրաքվեարկութիւն կանոնագիրը վերամայելու համար	1989	16428976
Բանիմացների Խորհրդի 2-րդ շրջանի ընտրություն	1990	11602612
Ի.Խորհրդարանի 4-րդ շրջանի ընտրություն	1991	18767042
Նախագահական 6-րդ շրջանի ընտրություն	1993	16796787
Ի.Խորհրդարանի 5-րդ շրջանի ընտրություն	1995	24717088
Նախագահական 7-րդ շրջանի ընտրություն	1997	29076070
Բանիմացների Խորհրդի 3-րդ շրջանի ընտրություն	1998	17847515
Քաղաքների «Ի. Խորհուրդների» առաջին. շրջ. ընտր.	1998	23649371
Ի.Խորհրդարանի 6-րդ շրջանի ընտրություն	1999	26826025
Նախագահական 8-րդ շրջանի ընտրություն	2001	28160405

Իրանահայ Համայնք

Թեհրանի Հ.Մ. «Միփան» միութիւնում, «Արարատ» մարզաւանում եւ ԻԱՄՄ-ում տօնեց Հայաստանի առաջին անկախ պետութեան 83-րդ տարեդարձը.- 2001թ. մայիսի 28-ին, յունիսի 1-ին եւ յունիսի 7-ին Թեհրանի վերոյիշեալ միութիւններում տօնեց Հայաստանի առաջին անկախ պետութեան 83-րդ տարեդարձը: 1918թ. մայիս 28-ը խորհրդանշէ է մեր հասնայն ժողովրդի իղձերի իրականացմանը, որում դեր ունեցաւ մեր ամբողջ ժողովուրդը: Մի խօսքով անկախութեան իրականացումը չըպէտք է մենաշնորհ համարել:

«Արարատ» մարզաւանում օրւայ քանախօսն էր ԼՂՀ Ազգային Ժողովի անդամ Արթուր Մոսեանը, իսկ «Միփան» միութիւնում ԻԻՀ Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատուր Ժ. Արրահանեանը եւ ԻԱՄՄ-ում Հ. Ստեփանեանը:

Ծրագրերի ընթացքում ելոյթ ունեցան Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան պրն. Գեղամ Ղարիբջանեանը եւ Թեհրանի հայոց թեմակալ առաջնորդ Տէր Մեայոսի եպիս. Սարգսեանը:

Գեղարեւտական բաժիններում հանդէս եկան «Ուրարտու», «Չարթնոց» երգչախմբերը, «Ոսկեղնիկ», «Կակաչ», «Կարաւան» պարախումբերը, «Կարաբաղի»-ի էստրադային համալոյքը եւ ասմունքողներ՝ Արփի Ալլահվերդեանը ու Հայրիկ Աղանեանը:

Վարազ Նովշադեանը Ասիա-ԱՅՌիկա մրցութիւններում փոխչեմպիոն դարձաւ.-

Վերջերս Եգիպտոսում կայացած լողի մրցութիւններում, որտեղ մասնակցում էին Իրանի, Եգիպտոսի, Զովլթի, Սիրիայի, Մորակոյի, Սաուդական Արաբիայի, Ալգերիայի եւ մի շարք ուրիշ երկրների լողի լաւագոյն մարզիկներ՝ Վարազ Նովշադեանը լողի ազատ ոճի 200 մ. (կրալ) ու 4x200 մ. մարզաճի բաժնում գրաւել



է երկրորդ տեղը: Իրանի պատմիկութիւնը նոյնպէս կանգնել է երկրորդ պատանդանի վրայ: Եգիպտոսում Վարազ Նովշադեանը իր թողած ցուցանիշով նոր ռեկորդ է սահմանել Իրանի համար:

«Լոյս»- Յուսանք, որ առաջիկայում ակամտես կը լինենք Վարազ Նովշադեանի նորանոր յաջողութիւններին:

Իրան

Թեհրանցիները շուտով ինտերնետի յատուկ ցանցի միջոցով կը ստանան տրանզիկային լուրերը.- Գարտարապետ Ալի Ռեզա Ֆաթթահին յայտարարելով վերոյիշեալ լուրը, մանրամասնութիւններ հաղորդեց այդ նոր ձեռքբերումի մասին: Ֆաթթահին՝ նախագծի գործադիր պատասխանատուն տեղեկացրեց, որ ստեղծած վեբայտը, որը կոչւում է «Թեհրանթրանզիկ» միեւնոյն ժամանակ գիտական տեղեկութիւններ կը փոխանցի աշխարհի տրանսպորտից, երթևեկութեան հետ կապած նորաստեղծ էլեկտրոնիկ սարքաւորումների եւ հարցին առնչող լոյս տեսած հանդէսների եւ յօդածների մասին:

Իրանի ներքին մասնքերը ապականացւած չէ.- Մասարդիւնաբերութեան միութեան քարտուղարը յայտարարելով վերոյիշեալ լուրը ասաց. «Բոլոր մասնքերքային արտադրութիւններում օգտագործելիք մտերը տարբեր փուլերում կատարւած հսկողութեան շնորհիւ զերծ են մնում ամէն տեսակի ապականացումներից»:

Նա աւելացրեց. «Երկրում արտադրւած երշիկները, նրբերշիկները եւ համբուրգերները պատրաստուած են տեղական կովի մսից եւ արտասահմանից ներմուծւած ոչ երոպական մսերից»:

Արազ հակագրող» եւ «Հակաէլեկտրոնիկական պատերազմ» կոչւած ուժերը մասնակցեցին «Զօրութիւն 80» փորձնական-ազգական գործողութիւններին.- ԻՌՆԱ-ի հաղորդման համաձայն, Իրանի բանակի արեւմտեան բաժնի գլխատուր հրամանատար Մոհամմադ Ալի ԱրմանՖարը յայտարարելով վերոյիշեալ լուրը, ասաց. «Նշւած գործողու-

թիւնը նկատի առնելով երկրի վսեմաշուք առաջնորդի խորհուրդները, կարելուք քայլ կը լինի ռազմական կարողութիւնը բարձրացնելու համար»:

Հայաստան

Լեւոն Անանեանը՝ Հայաստանի Լգրողների միութեան նախագահ (21.05.01 Արմէնայրես).- 55-ամեայ լրագրող եւ հրատարակախօս Լեւոն Անանեանը ընտրուել է Հայաստանի գրողների միութեան նախագահ: Հայաստանի գրողների միութեան 13-րդ համագումարը, որը տեւեց 3 օր (մայիսի 17-19-ը), անցաւ քաւականին քարդ ու խճճւած պայմաններում: Իսկ «նախընտրական կանաչանիան», քաղաքակիրք ընտրութեան փոխարէն, տարւում էր քայքայական սպառնալիքներով ու ընդվզումներով, յատկապէս կին պատգամատուրների աղմուկով, մամուլի որոշ աշխատողների, նոյնիսկ պետական պաշտօնեայ գրողների անվայելուչ պահածքով:

Այնուամենայնիւ, յաղթանակ տօնեց Լեւոն Անանեանը: Նա աւարտել է տեղի միջնակարգ դպրոցը եւ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: «Երեկոյեան Երեւան» եւ մի քանի այլ թերթերի խմբագրութիւններում աշխատելուց յետոյ, 1975 թականին, տեղափոխուել է «Գարուն» ամսագրի խմբագրութիւն, որտեղ, մի քանի պաշտօններ վարելուց յետոյ, 1990 թականին նշանակուել է գլխատուր խմբագիր: Մի քանի հրատարակախօսական գրքերի, տասնեակ յօլածների ու ռուսերէնից ու անգլերէնից քարգամատրութիւնների հեղինակ է, արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միութեան «Ոսկէ գրիչ» մրցանակին: 1993 թականին հիմնադրուել է «Ապոլոն» հրատարակչութիւնը, որը բնագրից ընթերցողին է ներկայացրել համաշխարհային գրողների աւելի քան 150 գիրք:

Գրողների միութեան երեք քարտուղարներից մէկը դեռ յայտնի չէ (25.05.01 Արմէնայրես).- Մայիսի 25-ին Հայաստանի գրողների միութեան 51 մարդոց բաղկացած վարչութեան նոր կազմը հաստատեց միութեան նախագահ Լեւոն Անանեանի առաջարկած միութեան նոր երկու քարտուղարների թեկնա-

ծուփինները: Միութեան քարտուղարներ ընտրեցին կինոգետ Դաիթ Մուրադեանը, որի ընտրութիւնը բաւականին վեճերի տեղիք տւեց (20 դէմ, 23 կողմ), եւ բանաստեղծ Հովիկ Հովեանը, որի թեկնածութիւնը քիւարկեց միաձայն: Երրորդ քարտուղարի տեղը բաց մնաց, քանի որ, ըստ Լ. Անանեանի, այդ պաշտօնն առաջարկել է արձակագիր Լեւոն Խեչոյեանին, որը, սակայն, իր համաձայնութիւնը դեռ չի տւել: Եթէ նա «ոչ» ասի, ապա վարչութեան յաջորդ նիստում նախագահը կը ներկայացնի նոր թեկնածութիւն: Վարչութեան նիստում բաւականին երկար խօսակցութիւն ծաւալեց Արգար Ափինեանին քարտուղար ընտրելու կամ չընտրելու հարցի շուրջ, որն, ի վերջոյ, աւարտեց նախագահի հաստատ խօսքով՝ Ափինեանը քարտուղար չի ընտրուի, սակայն, միութեան նախագահութեան նիստում նրան կը յանձնարարուի հրատարակչական գործունեութեան շարունակման խնդիրը: Այնուհետեւ ընտրեց միութեան նախագահութիւն՝ փակ քիւարկութեամբ: Լեւոն Անանեանը, դիմելով ներկաներին, շնորհակալութիւն յայտնեց իրեն վստահելու համար, ասելով, որ ընդունում է «աւերակ, որտեղ մեծ երկրաշարժի հետքեր կան ու խայտառակ իրավիճակ բոլոր բընագաւառներում», եւ աւելացրեց, որ յոյսով է, որ ինքը գրչակից ընկերների օգնութեամբ ու աջակցութեամբ ինչ-որ բան տեղից կը շարժի:

Ամենայն Հայոց կաթողիկոսը վերադարձաւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին (04.06.01 Արմէնայրես). - Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը՝ աւարտելով անդրանիկ հովւապետական այցը Հիւսիսային Ամերիկայի հայոց թեմեր, յունիսի 2-ին, ուշ երեկոյեան վերադարձել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Շուրջ մէկամսեայ այցի ընթացքում Վեհափառ հայրապետը եղել է ԱՄՆ Արեւմտեան, Կանադայի եւ ԱՄՆ Արեւելեան թեմերում, ամենուր հայրապետական իր օրհնութիւնն ու պատգամը բաշխել ամերիկաբնակ հաւատարմ հայոց հոտին, յորդորելով մշտապէս հայեացքը պարզած ունենալ դէպի մայր հայրենիքն ու մայր եկեղեցին, հաւատարիմ լինել հայրերի սրբազան հաւատքին: Վեհափառ հայրապետի բարձր նախագահութեամբ տեղի են

ունեցել նաեւ Հայաստանում քրիս-



տոնութիւնը պետական կրօն հրշակելու 1700-ամեակին նիւրած թեմական հանդիսութիւնները: Հովւապետական այցի ընթացքում Նորին սրբութիւնը հանդիպումներ է ունեցել Միացեալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշի, ամերիկեան սենատորների, Կանադայի վարչապետ ժան Կրետիէնի, ինչպէս նաեւ ԱՄՆ-ի եւ Կանադայի բարձրաստիճան պետական այլ այրերի հետ: Վեհափառ Հայրապետն այցելել է նաեւ ՄԱԿ-ի կենտրոնատեղի, ուր հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բոֆի Անանի հետ:

Հայաստանի ազգային գրադարանը՝ հայ գրքի մատենագիտութեան կենտրոն (04.06.01 Արմէնայրես). - Հայաստանի ազգային գրադարանը հայ գրքի մատենագիտութեան կենտրոն է. այստեղ մատենագիտական ցանկերի կազմումը սկսել է 1930-ական թականներից, ընդգրկելով 1512 թականից մինչեւ մեր օրերը աշխարհում լոյս տեսած հայ գրքերը. - յայտնեց գրադարանի փոխտնօրէն Ներսէս Հայրապետեանը 1851-1900թթ. ընդգրկող հատորները: Գրադարանը հրատարակում է նաեւ մամուլի ընդհանուր եւ վերլուծական մատենագիտութիւններ: Խիստ արժէքաւոր է Ամալեա Կիրակոսեանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտութիւն, 1794-1967 թթ.» ցանկը, որը չի կորցնում իր արդիականութիւնը եւ մշտապէս օգնում է հեազոտողներին: Կազմում են նաեւ հայ դասական եւ ժամանակակից գրողների անհատական մատենագիտութիւնները:

Միջազգային

Անախաղէպ առաջարկ՝ Թուրքիայի արդիւնաբերողների եւ

գործարարների միութեան կողմից (21.05.01 Արմէնայրես). - Համագործակցութեան աննախաղէպ առաջարկ է ստացել Հայաստանի արդիւնաբերողների եւ գործարարների միութիւնը, այս անգամ Թուրքիայի արդիւնաբերողների եւ գործարարների միութիւնից (TUSIAD): TUSIAD-ը պաշտօնապէս հրաւիրել է ՀԱԳՄ-ի նախագահ Արսէն Դաւարեանին եւ միութեան այլ ներկայացուցիչներին այցելել Թուրքիա: «Մենք հաւատում ենք, որ պէտք է լաւ յարաբերութիւններ եւ բաց երկխօսութիւն հաստատենք գործարար աշխարհի համաճանկարման կազմակերպութիւնների հետ: Այդ նպատակով, ցանկանում ենք սերտ կապեր հաստատել հարեւան երկրների կազմակերպութիւնների հետ: Մենք վստահ ենք, որ աշխարհագրական հարեւանութիւնը մեզ լայն հնարաւորութիւններ է տալիս համագործակցելու ամենատարբեր բնագաւառներում», - նշւած է Tusiad-ի վարչութեան նախագահ Թունչայ Օզիլհանի՝ ՀԱԳՄ-ին ուղարկած հրաւերքի նամակում: TUSIAD-ը գործում է ոչ միայն Թուրքիայում, այլ Բրիտանի եւ Վաշինգտոնի ներկայացուցչութիւնների միջոցով յարաբերութիւններ է պահպանում Եւրոմիութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների կազմակերպութիւնների հետ:

Ադրբեջանը վարկաբեկեց Եւրոպայի խորհրդում (24.05.01 Արմէնայրես). - Հայաստանի մասին ապատեղեկատուութեան տարածման հերթական փորձը Ադրբեջանի կողմից տասպալեց Եւրոպայի խորհրդում՝ վարկաբեկելով եւ՝ Ադրբեջանին, եւ՝ նրա կողմից տարտող քարոզչական քաղաքականութիւնը: Այդ մասին մամուլի համար տրւած հաղորդագրութեամբ յայտարարում է ՀՀ ԱԳՆ հասարակայնութեան հետ յարաբերութիւնների վարչութիւնը, ներկայացնելով վերջերս Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում ադրբեջանական կողմի հերթական փորձը՝ մեղադրանքներ ներկայացնելու Հայաստանին ու Լեւոնային Դարբաբալին՝ ադրբեջանցի ռազմագերիների վերաբերեալ, վկայակոչելով Կարմիր խաչի միջազգային կոմիտէն՝ որպէս այդ տուեալների հաւաստի աղբիւր: Ըստ ադրբեջան-

նական կողմի փաստաթղթի, իբր ԿԽՄԿ-ի ս.թ. ապրիլի 10-ի ներկայացրած գեկոյցի մեջ նշել է, որ հայկական կողմում պահում են անելի քան 700 աղբբեջանական ռազմագերի, եւ վերջին վեց ամիսների ընթացքում Կարմիր խաչին մուտք չի տրուել՝ այցելելու ռազմագերիներին Հայաստանում: Միջազգային կազմակերպութեանն իրենց խաղի մեջ ներգրաւելու այդ փորձը, սակայն, ասած է ՀՀ ԱԳՆ հաղորդագրութեան մէջ, ամիս դարձաւ բացայայտելու Աղբբեջանի կողմից ստայոյ տեղեկութիւններ տարածելու ասանդոյթը եւ դրանով հարածեց իր իսկ հեղինակութեանը: Կարմիր խաչը միանշանակօրէն հերքեց վերագրուող տեսլանքը՝ նշելով, որ ԿԽՄԿ-ն այդ տեսլանքի աղբիւրը չէ: Այս կազմակերպութիւնը գեկոյց չի ներկայացրել ո՛չ ս.թ. ապրիլի 10-ին, ո՛չ էլ որեւէ այլ ամսաթուով: Ինչ վերաբերում է ԿԽՄԿ-ի այցելութիւններին առընչուող տեղեկութիւններին, ապա դրանք բացարձակապէս չեն համապատասխանում իրականութեանը:

Գարեգին Բ կաթողիկոսը հանդիպել է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բոֆի Անանի հետ (29.05.01 Արմէնայրես). - Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը ԱՄՆ Արեւելեան թեմ հովաւապետական այցի ընթացքում մայիսի 25-ին քսան թուրքական ջերմ եւ բարեկամական հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բոֆի Անանի հետ: «Մենք նոյն աշխատանքն ենք կատարում, դուք՝ աղօթքի, մենք՝ դիւանագիտութեան միջոցով», - նշել է գլխաւոր քարտուղարը: Վեհափառ հայրապետն իր երախտագիտութիւնն է յայտնել Բոֆի Անանին Գարաբաղեան խնդրի խաղաղ կարգաւորման հարցում ցուցաբերած հետաքրքրութեան, ինչպէս նաեւ այն աջակցութեան համար, որ ցուցաբերում է ՄԱԿ-ը Հայաստանին՝ ժողովրդավարութեան հաստատման գործում: Անդրադառնալով դարաբաղեան խնդրին, Նորին սրբութիւնը նշել է, որ Աղբբեջանի մահմեդականների հոգեւոր առաջնորդի հետ հանդիպմամբ սկիզբ առած երկու հոգեւոր առաջնորդների երկխօսութիւնը եւս նպատակ ունի նպաստելու երկու ժողովուրդների միջեւ խաղաղութեան հաստատմանը:

ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարը յոյս է յայտնել, որ նոր հազարամեակը լինելու է խաղաղութեան հազարամեակ:

Նի Եօրքի Կենտրոնական այգում հայրապետական պատարագ (29.05.01 Ազգ օրաթերթ). Ինչպէս ծրագրուել էր, մայիսի 27-ին, կի-



րակի օրը, Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը Նի Եօրքի Կենտրոնական այգում (Central Park) մատուցեց Սուրբ պատարագ՝ հայ եւ օտարազգի բազմահազար հաւատացեալների ներկայութեամբ, ինչպէս պատկերած է լուսանկարում: Նախորդ օրը, շաբաթ, Վեհափառ հայրապետը Նի Եօրքի առաջնորդանիստ Սր.Վարդան մայր եկեղեցու բակում մասնակցեց իրեն ի պատիւ տրուած հրաժեշտի «ղաշտահանդէսին»: Իսկ ուրբաթ օրը՝ մայիսի 25-ին, Նորին սրբութիւնը ՄԱԿ-ի կենտրոնում 20 թուրք տեսակցեց գլխաւոր քարտուղար Կոֆի Անանի հետ: Հանդիպմանը ներկայ են գտնուել գլխաւոր քարտուղարի տեղակալ Բենն Սեւանը եւ ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցիչ Մովսէս Աբելեանը: Հրաժեշտի ժամանակ Վեհափառ հայրապետն օրհնել է Կոֆի Անանին, ինչին վերջինս պատասխանել է. «Այո, մենք պետք ունենք Ձեր աղօթքներին»: Աւելի ուշ Վեհափառն այցելել է Հայաստանի ներկայացուցչութիւն:

Անյայտ կորած են Արցախի 608 ազատամարտիկներ (30.05.01 Արմէնայրես) Պատերազմի ընթացքում Արցախից անյայտ կորած ազատամարտիկների ցուցակում ներկայումս գրանցուած է հանրապետութեան 608 քաղաքացու անուն: Նրանց որոնմանն ու յայտնաբերմանն է հիմնականում ուղղուած ԼՂՀ անյայտ կորած ազատամարտիկների հարազատների միութեան գործունեութիւնը, ասել է միութեան նախագահ, անյայտ կորած ազատամարտիկի մայր Գրիգորեանը ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասեանի հետ կազմակերպութեան գրասենեակում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որին ներկայ էր նաեւ արտգործնախարար Նայիրա Սելջումեանը: Ըստ ԼՂՀ նախագահի մամլոյ ծառայութեան, Ա.Ղուկասեանը հաւաստիացրել է, որ ԼՂՀ իշխանութիւնները խնդիրը մշտապէս արծարծում են թէ հակամարտութեան կարգաւորման գործընթացի շրջանակներում եւ թէ միջազգային մարդասիրական կազմակերպութիւնների հետ հանդիպումների ժամանակ:

Ստորագրեց «Կառուցածքային բարեփոխումների վարկային ծրագրի (SAK-4) մասին» համաձայնագիրը (01.06.01 Արմէնայրես). - Մայիսի 31-ին Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետութեան եւ Համաշխարհային բանկի միջեւ ստորագրուել է «Կառուցածքային բարեփոխումների վարկային ծրագրի (SAK-4) մասին» համաձայնագիրը: Ըստ համաձայնագրի, Հայաստանին յատկացելու են 38,4 մլն SDR/50 մլն ԱՄՆ դոլար/վարկային միջոցներ: Պայմանագիրը ՀՀ անունից ստորագրել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արման Կիրակոսեանը, ՀԲ անունից՝ Եւրոպայի եւ Միջին Ասիայի գծով փոխնախագահի պաշտօնակատար, Հայաստանի եւ Վրաստանի բաժնի պատասխանատու Ջուլի Օ'Քոնորը:

Վեհափառ Հայրապետը հանդիպել է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ (24.05.01 Արմէնայրես). - Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, որն իր հովաւապետական առաքելութիւնն է շարունակում ԱՄՆ հայոց Արեւելեան թեմում, Վաշինգտոն այցի յաջորդ օրը՝ մայիսի 23-ին, Մայիտակ Տանն անելի քան կես-ժամեայ հանդիպում է ունեցել Միացեալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշի հետ: Նոյն օրը Վեհափառ հայրապետն այցելել է ԱՄՆ Սենատ եւ Ներկայացուցիչների պալատ, ուր ամերիկեան սենատորներն ու կոնգրեսականները պատիւ են ունեցել իրենց աշխատանքն սկսել Ամենայն հայոց հայրապետի աղօթքով: Կեսօրից յետոյ Նորին սրբութիւնը մեկնել է Նիւ Ջերսի: ■

Համագործակցութեան կամուրջ

Չարեւաններին, իրօք, մենք չենք ընտրում: Ու թէ պատահմամբ յանձին հարեւանիդ՝ ընկեր ես գտնում եւ բարեկամ, ուրեմն անհամեմատ աւելի թեթեւանում է հոգսդ: Առաւել եւս, եթէ ընդհանուր են դառնում նաեւ շահերը: Քաղաքական, պետական մակարդակով յատկապէս երկուստեք շահերն էլ աւելի են շողկապում դրկից երկրներին, ինչի վկայութիւնը վերջին շորջանում հայ-իրանական յարաբերութիւնների սերտացումն է: Իսկ դրան, տարբերույթ այլ գործօններից զատ, նպաստում է նաեւ իրանահայ համայնքը, որը, դատելով իրենց իսկ ձեռնարկումներից, բաւական ազդեցիկ է Իրանում ու նաեւ մտահոգ՝ հայրենի երկրի բարգաւաճմամբ:

Իրան-Հայաստան առեւտրի պալատի հիմնադիրներից մէկի՝ Վարուժ Սուրբենեանի հետ մեր զրոյցը ասածի հաւաստիքն էր: Ի դէպ, զրոյցին ներկայ էր նաեւ պալատի նախագահ Լեւոն Ահարոնեանը, որը ոչ թէ հերթապահ բառերով է արտայայտում իր սէրը հայրենիքի հանդէս, այլ փորձում է գործնական օգտակարութեամբ գտնել մասամբ թեթեւացնել մեր հայրենակիցների հոգսերի բեռը:

Վարուժ Սուրբենեանը միջազգային փոխադրութիւններից եւ բիզնեսից զատ, նաեւ մշակութային գործունէութեամբ է զբաղում եւ ներկայումս ակտիւ մասնակիցն է իրանահայ մշակոյթի զարգացման: Իր իսկ խօսքերով՝

-Այո, դեռ երիտասարդ տարիներից ես շատ սիրել եմ արւեստը՝ յատկապէս թատրոնը: Իրանում «Արմէն» թատերախումբ կայ, որն ստեղծել է 1960թ.: Այն ժամանակ թատերախմբի ղեկավարը Շահէն Սարգսեանն էր, որը Պարսկաստանի արդի թատրոնի հիմնադիրներից էր եւ առաջիններից մէկը, որը Թեհրան քերեց երոպական մշակոյթի նորութիւնները: Յաւօք, ես «Արմէն» թատերախումբ մտայ նրա մահաւանդ յետոյ, երբ թատերախումբը ղեկավարում էր միջազգային թատրոններում յայտնի Ա. Յովհաննիսեանը: Առաջ, ես այլ մասնագիտութիւն ունեմ, եւ գտնում եմ, որ իմ թարգմանութիւնները՝ աւելի շատ սիրողական փորձեր են:

Գիտէք, հայրենիքից դուրս վտանգ կայ, որ հայրենիքից հեռու գտնելը կարող է մոռացութեան մատնել ազգային մշակոյթը: Եւ այս մտահոգութիւնը մեզ ստիպում է միշտ զգօն լինել: Տարիներ առաջ մենք 4-5 ընկերներով որոշեցինք ինչ-որ գրական-գեղարւեստական հանդէս հրատարակել (գրեթէ 30 տարի է, որ Թեհրանում գուտ գեղարւեստական որեւէ թերթ կամ ամսագիր չի հրատարակում): Այդ խնդրով դիմել ենք Իրանի կառավարութեանը: Եւ մինչ այդ հարցի օրէնսդրօրէն լուծումը, «Լոյս» երկշաբաթաթերթի հետ երկար բանակցելուց յետոյ որոշեցինք, որ մեր պատրաստած նիւթերը հրատարակենք առանձին թերթով, որպէս «Լոյս»-ի յաւելում:

Ուրախութեամբ պէտք է ասեմ, որ յաւելումի առաջին համարը պատրաստ է տպագրութեան եւ առաջիկայ 10 օրուայ ընթացքում կը հրատարակւի¹:

Այն տարբեր թեմաներ է ընդգրկում՝ կինօ, թատրոն, գրականութիւն: Այս համարում տպագրել ենք նաեւ մէկ նիւթ Հայաստանից: Նաեւ էջեր ունենք՝ վերջերս մահացած պարսիկ մեծ բանաստեղծ Շամսուդին Նիրաւի: Բանաստեղծի կինը հայուհի է, նրա բանաստեղծութիւնները թարգմանել են հայերէն եւ տպագրել Հայաստանում...

-Ձեր խօսքերից դատելով՝ գաղթօջայխում մշակոյթը ճահճացած վիճակում չէ եւ, նոյնիսկ աւելին:

-Անկեղծ ասած, ճահճանալու վտանգը զգացում էր. գիտէք, եթէ չկան գրական ստեղծագործութիւններ, ապա ոչ կինօն, ոչ թատրոնը վերելք չեն կարող ունենալ: Իրանում 80-ականների սկզբին շատ աշխուժացաւ թատրոնը: Եթէ ամէն շաբաթ ներկայացումներ եւ համերգներ էին կազմակերպում: Բայց այսօր շատ հազաւաղ էն նման բաներ լինում: Ես գտնում եմ, որ այս առումով լուրջ խնդրոտ է գրականութեան, նոր գեղարւեստական ձեռնարկների բացակայութիւնը, որը փորձում ենք լրացնել...

-Իսկ Հայաստանի հետ համագործակցո՞ւմ եք:

-Ոչ, դժբախտաբար: Իսկ աւելի ճիշտ, առայժմ ոչ: Մենք որոշել ենք այդ մասին խօսել եւ պայմանաւորաւորութիւններ ձեռք բերել առաջին համարից յետոյ: Երբ թերթը կը լինի, մենք կը բերենք այն Հայաստան եւ համագործակցութեան մեր առաջարկն աւելի գործնական ու յստակ կը լինի:

-Ասեմ, որ մենք պատրաստ ենք համագործակցելու: Իսկ ինչպիսի՞ օգնութիւն կարող են ցուցաբերել հայաստանեան թերթերը:

-Առաջին հերթին, անհրաժեշտ է ճանապարհներ գտնել հայկական թերթերը Իրանում տարածելու: Ճիշտ է, «Նոր դարը», «Գարունը» սահմանափակ թով բաժանում են Իրանում, բայց դա շատ քիչ է...

-Արդեօք ընթերցողները շա՞տ են:

-Ես պէտք է խոստովանեմ, որ կայ այդ դժարութիւնը: Բայց ինքներդ գիտէք, որ ընթերցողները ձեռք են բերում թերթի գործունէութեամբ: Այսօր Իրանում ունենք թերթեր՝ «Լոյս», «Ալիք» եւ «Ապագայ» ամսաթերթը, որը նոր է: Ընթերցողի հետաքրքրում են տարբեր թեմաներ: Եւ որքան բազմաբնոյթ թերթեր լինեն շուկայում այնքան ընթերցողը կը շատանայ:

-Խօսեցինք իրանահայ մշակոյթից, իսկ Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է այսօր Հայաստանի մշակոյթի վիճակը:

-Այսօր, հաշի առնելով առկայ պայմանները, երկրի տնտեսական ծանր վիճակը, անկարելի է գոհունակութիւն չյայտնել այսչափ հարուստ մշակոյթից, շատ գովելի է: Իհարկէ, ես հիմա որակի մասին չեմ խօսում, յետոյ որակը ճաշակի հարց է, գուցէ մի բան ինձ դուր գայ, Ձեզ դուր չգայ: Բայց երբ Ֆիլիպսոնիայում համերգները տեղի են ունենում լեփ-լեցուն դահլիճներում, սա արդէն ուրախալի է: Ասել է թէ՛ հասարակութիւնը մեծ բարոյական եւ մշակութային պաշար ունի: Բաւական է մի փոքր բարելաւի տնտեսական վիճակը, եւ Հայաստանում մշակոյթը մեծ զարկ կը ստանայ, նոր վերելք կապրի:

-Ի՞նչ էք կարծում՝ արդեօք մե՞ծ է անջրպետը Հայաստանի եւ իրանահայ գաղթօջայի միջեւ...

-Անկեղծ ասած, եւ անջրպետ չեմ տեսնում: Ճիշտ է, կան ասանոյթների տարբերութիւններ, բայց անջրպետ չկայ: Մեզ համար հայրենիքը մի փոքր իդէալականացել էր: Այն ժամանակ, երբ դժար էր շփուել Հայաստանի հետ, ամէն ինչ այլ կերպ էր դիտւում:

Ճար. էջ 7-ում

¹ Այս հարցազրոյցը կատարել է այն ժամանակ, երբ դեռ չէր հրատարակւել թերթիս գրական առաջին յաւելումը:



Հայոց ցեղասպանութիւնը



Տեղասպանութիւն երեւոյթի բնորոշումը

Պրոֆեսոր Ի.Ա. Արաբեան

Ըստ Մաշտոցի անուն հին ձեռագրերի ինստիտուտի տնօրէն, պատմագիտութեան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Սեն Արեւշատեանի ներկայացրած տւեալների, 1915-18թթ. թուրքերի կատարած ցեղասպանութեան հետեւանքով աւերած կամ մզկիթի են վերածւած Ադանայի, Ադիանանի, Արաբկիթի, Ալմի, Բիթլիսի, Դիարբեքիթի, Երզնկայի, Եղակիայի, Էրզրումի, Մալաթիայի, Խարբերդի, Մասի, Մուշի, Կեսարիայի, ուրիշ բնակավայրերի հարիւրաւոր վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ, իսկ հոգեւոր զանձերը երկիւզել են կամ վաճառքի համուել եւ կամ թալանուել: Թուրք եւ քուրդ հրոսակները ոչնչացրել են նաեւ Ս. Հրեշտակապետ վանքի. Ս. Աստուածածին, Ս. Սարգիս. Ս. Կարապետ եկեղեցիները, ձեռագրերն ու գրքերը: Նրանցից շատ կարեւոր էին 12-18-րդ դարերի 167 ձեռագրերը, բազմաթիւ ատետարաններ, սաղմոսագրքեր, մաշտոցներ, ժամագրքեր եւ այլ հոգեւոր արժէքներ: Եղեռնի տարիներին հայ ժողովուրդը կորցրել է 15-18 հազար ձեռագրեր:

Փաստերի շարանը անվերջ կարելի է բերել, դրանք կարող են կազմել բազմաթիւ հատորներ, որոնք դեռ շարունակուում են հրատարակուել: Դրանց մի մասը տեղ է գտել բազմավաստակ գիտնական Մ. Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Հայերի ցեղասպանութիւնը օսմանեան կայսրութիւնում»⁵ (Երեւան, 1991թ.) եւ Ջ. Կիրակոսեանի բազմաթիւ աշխատութիւններում⁶, Ս.Ս. Ստեփանեանի խմբագրութեամբ հրատարակուած «Գերմանական աղբիւրները հայերի ցեղասպանութեան մասին» գրքում, Ծ. Պ. Աղայեանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից» (Երեւան, 1976), Ա. Ն. Մնացականեանի «Հայ ժողովրդի ողբերգութիւնը ռուս եւ համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ» (Երեւան, 1965թ.) ռուսումնասիրութիւններում եւ այլն:

Մտնելով պատերազմական գործողութիւնների մէջ, երիտթուրքերը նպատակամղուած էին իրենց կայսրութեանը միացնել Անդրկովկասը, Հիւսիսային Կովկասը, Դրինը եւ Միջին Ասիան: Այդ ծրագիրն իրականացնելու համար առաջին հերթին պէտք էր ոչնչացնել հայերին, որոնք դիմում էին ինքնապաշտպանութեան՝ թոյլ չտալով զարթել իրենց հողերը, հրաժարուում էին ընդունել նրանց կրօնը եւ ունէին ռուսական կողմնորոշում: Արեւմտեան Հայաստանի հայերը, թէւ պատրաստ չէին ինքնապաշտպանութեան, այնուհանդերձ, որոշ տեղերում ցեղասպանները հանդիպեցին լուրջ դիմադրութեան: Այսպէս, օրինակ, 1914 թուականի վերջին Վանի կուսակալի պաշտօնում նշանակուելու Ջեղեթ բէյը: Նա, բանտից ազատելով աւա-

զակներին, գողերին, մարդասպաններին, նրանցով համարուել գործառններն ու ոստիկանների շարքերը: Ձիւնելով մահմեդական այդ այլանդակներին, նա միաժամանակ զինաթափեց հայ զինուորներին եւ ուղարկեց շինարարական աշխատանքի: Բացի այդ, հայերից զինակոչիկներ պահանջեց՝ այդ պատրուակով նրանց զրկելով մարտական ուժերից եւ հեշտացնելով բնաջնջումը:

Վանի հոգեւոր եւ կուսակցական ղեկավար ուժերը պառլամենտի դեպուտատ Վռամեանի միջոցով դիմեցին ներքին գործերի նախարար Թալաթ փաշային՝ վերջ դնելու հայերի բռնութիւններին: Ջարդից ու կոտորածից, թալանից փրկուելու համար վանեցիները Արամ Մանուկեանի գլխաւորութեամբ կազմեցին «Վասպուրականի հայ ինքնապաշտպանութեան զինուորական մարմին»: Թշնամու դէմ դուրս եկաւ Վանի ամբողջ հայութիւնը այդ բոււծ ժերերը եւ երեխաները, պատանիները, կանայք⁷: Հնարաւոր չէ այստեղ նրանց հերոսական մարտերը նկարագրել, սակայն պէտք է ընդգծել Վանի հերոսամարտն էլի մէկ անգամ ապացուցեց, որ ահեղ թշնամուց կարելի է փրկուել համախմբուած ու վճռական պայքարով: Այդ հերոսամարտի շնորհիւ կոտորածներից փրկուել 150-200 հազար հայ⁸:

Ինքնապաշտպանութեան դիմեցին նաեւ Ուրճայի հայերը (այդ քաղաքի բնակչութեան 35 տոկոսը հայեր էին, որոնք զբաղուում էին արհեստներով եւ առետարով, ունէին եկեղեցի եւ կրթական, մշակութային հաստատութիւններ): Հայերի գերակշռող մասը որոշում է, որ կոտորածներից փրկուելու միակ ճանապարհը ինքնապաշտպանութեան դիմելն է, եւ դրան համաձայնում են բոլորը: Նրանք պատրաստուում են ինքնապաշտպանութեան դիրքեր, թէւ խիստ անհասարակ էին ուժերը: 1915թ. սեպտեմբերի 29-ին, երբ իշխանութիւնները փորձում են կառուարել նոր խուզարկութիւններ, բռնագրաւումներ եւ ձերբակալութիւններ, հայ եկեղեցու զանգը ի զէն է կոչում: Հայաբնակ թաղերում կառուցում են բարիկաղներ, խրամատաւորում են ինքնապաշտպան ուժերը: Սեպտեմբերի 30-ին թուրքական խայտաբղտ ուժերը մոլլաների ու խոջաների առաջնորդութեամբ յարձակուում են հայոց դիրքերի վրայ՝ փորձելով գրաւել հայերի տները, ունեցւածքը թալանել: Սակայն հայոց դիրքերի կազմակերպիչ Մ. Եօթներբայրանի հրամանով, հայերը ինքնապաշտպանական կրակոցներով փախուստի են մատնում թշնամու: Դիտորդները հիացմունքով են պատմել թուրքերի սարսափահար փախուստի մասին: Ձեռնալ փաշայի կարգադրութեամբ Ուրճա է գալիս Ֆահրի փաշան եւ 12 հազարանոց բանակով յարձակուում հայերի բարիկաղների վրայ: Հայերին չի ընկնում ոչ մի բան, թէւ ռմբակոծութիւնները քարուքանդ են անում նրանց դիրքերը, սակայն նրանք ուժերը վերադասաւորած կուում էին զիշեր ու ցերեկ, անքուն ու սոված, սպանւած ու վիրաւոր տղա-մարդկանց փոխարինում են կանայք ու պատանիները, կրակում, քարկոծում են:

⁵ Տես նաեւ Մ. Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ հայ ժողովրդի պատմութիւն, ԵՊՀ, 1985 թ.:

⁶ Ջ. Կիրակոսեան, Առաջին համաշխարհային պատերազմը եւ Արեւմտեան Հայաստանը 1965. Երիտթուրքերը պատմութեան դասաստանի առաջ 1982:

⁷ Հարարեան Ա. 1915թ. արեւմտահայերի կոտորածները եւ ինքնապաշտպանական մարտերը, Երեւան. 1990. էջ 42-43:

⁸ Նոյն տեղում, էջ 53:

Տեղասպանություն

Գերմանացի եկարզը «բարեխօսում» է Մ. Եօթնեղ-բայրեանին, որ դադարեցնի կռիւը եւ յանձնի, այլապէս կարող են բոլորը կոտորել: Նա խոստանում է Եօթն եղ-բայրեանին փոխադրել Գերմանիա, իսկ դիմադրողներին ներման արժանացնել: Պատասխանը լինում է մէկը «Եթէ ձեր մէջ քաղաքակիրթ եւ քրիստոնեայ մարդու զգացում կայ, փրկեցէք անապատներու մէջ կոտորող անմեղ հայ ժողովրդին»⁹:

Վերջապէս ինքնապաշտպանական կռիւների կարեւոր դէպքերից մէկն էլ Մուսա լեռան հերոսամարտն էր, որտեղ հայերը ենթարկւել էին բազմաթիւ փորձութիւնների, հալածանքներին եւ զրկանքների, բայց տոկունութեան եւ քաջութեան շնորհիւ մնացել էին անասան, պահպանելով իրենց մայրենի լեզուն, քրիստոնէական հաւատը: Մինչեւ այդ, 1915 թ. յուլիսի 28-ին ստացել էր երիտարքերի հրամանը՝ իրենց գիւղերից բռնագաղթելու մասին: Այդ առիթով հրավիրած վեց գիւղերի աւագների խորհուրդը որոշեց ինքնապաշտպանութեան ամենաազնիւ տարրերակը, դա ապստամբութիւնն էր, որը կարող էր հանգեցնել փրկութեան: Որոշեցին թողնել բնակավայրը, վերցնել զէնքերն ու պարէն եւ բարձրանալ Մուսա լեռը: Այդ որոշմանը ենթարկեցին 4231 մարդ, իսկ 2080-ը բռնեցին տարագրութեան ճամփան եւ կոտորեցին¹⁰: Մուսալեռցիները, դեռ հազիւ աւարտած իրենց գաղթը, կառուցեցին գորանոցներ, պատնէշներ, խրամատներ եւ կրակակէտեր, դասատրեցին եղած ուժերը: Թշնամին, սակայն, չթողեց նրանց հանգիստ մնալ, եւ օգոստոսի 7-ին թուրքերը յարձակում են նրանց դիրքերի վրայ: Կատաղի կռիւն աւարտում է արժանի հակահարածով՝ թուրքերը հետ են շարտում:

Իրանից յետոյ նրանք մուսալեռցիներին առաջարկում են յանձնել: Չստանալով պատասխան՝ անցնում են նոր յարձակման: Հայերը ծուղակի մէջ են գցում հրոսակներին, ջախջախում կան փախուստի եւ մատնում նրանց գրաւելով զէնքերը: Վերջապէս վրայ է հասնում Ֆրանսիական ռազմամարտը, մուսալեռցիներին տրամադրում պարեն եւ ռազմամթերքի պաշարներ, որի շնորհիւ ռմբակոծում են թուրքերի դիրքերը, իսկ սեպտեմբերի 14-ին Ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենարը եւ անգլիական մի նաւ ռազմամարտերի ուղեկցութեամբ, մօտենում են Մուսա լեռանը եւ փրկում անի քան չորս հազար հայի¹¹:

Մուսա լեռան հերոսամարտի մասին շատ վառ եւ պատկերաւոր նկարագրել է աստրիացի աշխարհահռչակ գրող Ֆրանց Վերձելը «Մուսա լեռան 40 օրը» վեպում, որը թարգմանել է եւրոպական գրեթէ բոլոր լեզուներով, ինչպէս եւ հայերէն, ռուսերէն: Վերձելի այդ վեպը հետագայում ուսանելի դասագիրք դարձաւ գերմանական Ֆաշիզմի դէմ պայքարող ժողովուրդների համար. յաճախ գորահրամանատարները վկայակոչում էին այն՝ «կռուել այնպէս, ինչպէս կռուում էին հայերը Մուսա լեռան վրայ»: Իսկ Վերձելի անունը յիրաւի ոսկի տառերով գրեց հայ ժողովրդի սրտում...

⁹ Նոյն տեղում, էջ 75-76:

¹⁰ Նոյն տեղում, էջ 78:

¹¹ Տես Ե. Ղ. Մարգսեան. «Թուրքիան եւ նրա նաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում 1914-18 թթ.» Երևան 1964. էջ 288:

Դժնի այն օրերին զոյամարտեր տեղի ունեցան Մուշում եւ Սասունում, Շապին-Գարահիսարում, օսմանեան կայսրութեան բոլոր հայաբնակ վայրերում:

Անսպառ նիւթեր կան, դեռ չուսումնասիրած աղբիւրներ Թուրքիայի ծրագրած ցեղասպանութեան, չարանեւ, զազանային գործողութիւնների մասին, որը տարածեց Արեւելեան Հայաստանում նոյնպէս: Թուրքական գորքերը 1918թ. Արեւելեան Հայաստանի շատ բնակավայրերում եւ Ադրբեջանում աղբրեջանցի ազգայնամուլների համատեղ ուժերով կատարեցին հայերի ջարդ, փորձելով մահացու հարած հասցնել արեւելահայութեանը: Մինչեւ 1918 թ. սեպտեմբերեան կոտորածը, Բաքում ապրում էր 88673 հայ: Կազմակերպւած ջարդերի հետեւանքով, սակայն, սպանեցին 5248, թալանեցին 30 հազար մարդ, բռնագաղթեցին 31243-ը, գերի ընկան 3396-ը եւ անյայտ կորան 3572 հայեր, կալանաւորեցին 253, բռնաբարեցին 288 եւ բռնի տեղահանեցին 571 հայ¹²:

Շար. 4



Համագործակցութեան... Շար. էջ 5-ից


Բայց հիմա, երբ Հայաստանը անկախ է եւ այլեւս պրոբլեմներ չկան շփումների, փորձում ենք ւսելի մօտիկից ճանաչել Հայաստանը եւ հայրենակիցներին:

Իսկ ինչպէ՞ս են հայերին վերաբերում Իրանում:

-Շատ լաւ: Հայերը կրօնական փոքրամասնութիւն լինելով հանդերձ, իրենց կարեւոր դերն ունեն Իրանում: Բընիկ իրանցիները միշտ ասում են, որ ամենաազնիւ, ամենաաշխատասէր եւ վստահելի մարդիկ են (ճիշտ է, հիմա երբեմն չարաշահում են այդ վստահութիւնը, բայց դրանք ազգի նկարագիրը ներկայացնողներ չեն): Շատ բնագաւառներում՝ պարսկական գիտութեան եւ արեւստի, բժշկութեան, դիւանագիտութեան, հայերը հիմնադիրներ են եղել: Այսօր էլ պարսկական արեւստում յայտնի դէմքեր կան՝ դերասանուհի Լորետան, երաժիշտ Գրիգորեանը, որը նուտագրել է պարսկական բանահիւսական երգերը, եւ շատ այլ հայեր, ովքեր նպաստում են պարսկական մշակոյթի զարգացմանը, եւ պարսիկները դա գնահատում են: Պարսկաստանում կան շատ տարբեր էթնիկ խմբեր, բայց հայերի նկատմամբ վերաբերմունքը ւսելի բարեհաճ է...

**Անի Վարդանեան
Աւանգարդ 14-20 փետրարի 2001թ.**

Նորամուտների գալուստը բարի

<p>Լիոն Ոսկանեան մայրը՝ Դրաչիկ հայրը՝ Էդիկ</p> <p>Էմանուէլ եւ Ազաիէ Թորոսեան մայրը՝ Արաքս հայրը՝ Գորդան</p> <p>Լեօ եւ Լիա Միրզախանեան մայրը՝ Քարոլին հայրը՝ ՌաՖֆիկ</p>	<p>Շարիս Մայիլեան մայրը՝ Անժելինա հայրը՝ Արա</p> 
---	---

¹² Նու Մարգսեան Ե. , Թուրքիան եւ նրա նաճողական քաղաքականութիւնը:

Հասարակական

«Á»ñï ù Çèù. ŞĀ áõñù³ Ī³ Ý áõĀ»ñĀ Ī áï áñ»Ē»Ý Û¿Ī áõĪ ¿è ÛÇĶáÝ Ñ³ Ūñçǀ

Հայոց Յեղասպանութեանն է անդրադարձել անգլիական «Ինդիպենդընթ»ը

«Յեղասպանութիւնը ժխտելու արտակարգ օրինակ ցուցաբերեց Լոնդոնում տեղակայած Թուրքիայի դեսպանատունը: Թուրք դիւանագէտները պաշտօնական բողոք են յղել անգլիացի լուսանկարիչ Մայմոն Նորժուլքին, նշելով, թէ Լոնդոնի «Պատերազմի կայսերական քանգարան»ում կազմակերպւած ցուցահանդէսից պէտք է հանւեն 1915թ. դէպքերին վերաբերող ստեղծագործութիւնները, գրել է հեղինակատու «Ինդիպենդընթ» քերթի թղթակից Ռոբերտ Ֆիսքը օգոստոսի 31-ի համարում:

Ինչպէս գրել է «Ազգ»ը իր նախորդ համարներից մէկում, անգլիացի լուսանկարիչ Մայմոն Նորժուլքի ցուցահանդէսը ներառել է հինգ ցեղասպանութիւնների մասին պատմող լուսանկարներ: Աւստրիա, Ռուսնոյա, Վիետնամ, Կամբոջա եւ Հայոց ցեղասպանութիւն: Յօդաւածագիր Ֆիսքը շեշտում է, որ թուրքական ուժերը 1915թ. կոտորել են մէկ ու կէս միլիոն հայերի:

«Ես ապշած էի մնացել, երբ թուրքական դեսպանութիւնից նամակ ստացայ: Արհամարհեցի թուրք դիւանագէտներին, որ նամակը արժանի չէ պատասխանի: Ես ցուցահանդէսում որեւէ փոփոխութիւն չկատարեցի», ասում է լուսանկարիչ Նորժուլքը: Թուրքիայի դեսպանատան խորհրդական Մեհմեդ Ակաթը նամակում մեղադրել է Նորժուլքին: «Պատերազմի կայսերական քանգարան» այցելող թուրքերին անհանգստացնելու մէջ: Թուրքերին յատկապէս զայրացրել է, որ գուգահեռներ են անցկացնել Առաջին աշխարհամարտի տարիներին Անատոլիայում կոտորած հայերի եւ Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի կողմից հրեաների ջարդերի միջեւ: Նամակում թուրք դիւանագէտ Ակաթը գրում է, թէ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ պընդումները «կատարեալ կեղծիք են»:

«Հայոց ցեղասպանութիւնը վաղուց է յայտնի պատմաբաններին եւ դիւանագէտներին: Պատերազմի տարիներին թուրքական ուժերը Թուրքիայի հարաւային շրջաններում կոտորել են հայ տղամարդկանց, կանանց եւ երեխաներին քշել Սիրիայի անապատները: Այն ժամանակ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաւուն դատապարտել է ոճրագործութիւնը, իսկ Չրըչիլը յետագայում կոտորածներն անւանել է «ցեղասպանութիւն», գրում է Ռոբերտ Ֆիսքը, անելացնելով, որ թուրք դիւանագէտ Ակաթի նամակի բովանդակութիւնն աննախադէպ է. «Ճիշտ է, Առաջին աշխարհամարտի տարիներին, ի պատասխան ապստամբութեան ահագնացող վտանգի, օսմանեան դեկավարութիւնը հրաման է տւել հայ բնակչութեանը տեղահանել դէպի Սիրիա, որ շատ ցաւալի է, ընդունել է Ակաթը, անելացնելով, բայց օսմանեան իշխանութիւնները արել են ամէն բան պատերազմի տարիներին պաշտպանելու հայ բնակչութեանը»:

Սակայն Յեղասպանութիւն տեսած հայերը յիշում են, թէ ինչպէս էին իրենց ընտանիքները սպանում, ինչպէս

էին հայ աղջիկներին բռնաբարում եւ տանջում Սիրիայի անապատներում, շարունակում է յօդաւածագիր Ֆիսքը. «Նորժուլքի ցուցահանդէսում ներկայացւած լուսանկարները պատկերում են Թուրքիայի հարաւային շրջաններում հազարաւոր սպանւած հայերի մարմինները: Հայկական կոտորածների բարձրակէտում թուրք իշխանութիւններն ապշեցրել են ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաւուն՝ նրանից տեղեկութիւն հայցելով ամերիկեան ապահովագրական ընկերութիւններում թուրքահայերի ունեցած գումարների վերաբերեալ, այն բացայայտ նպատակով, որ յափշտակեն դրանք: Այդ ձեւով Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստները կողոպտեցին հրեաների խնայողութիւնները: Մինչեւ հրեաների ցեղասպանութեան ձեռնարկելը Հիտլերն իր գեներալներին հարցնում էր. «Ո՞վ է այսօր յիշում հայերի ցեղասպանութիւնը»:

«Ինդիպենդընթ» օգոստոսի 31-ի խմբագրականում «Թուրքիան պէտք է համարձակօրէն դիմակայի իր պատմութեան նողկալի իրադարձութեանը» վերնագրի ներքոյ գրում է. «Անյատելի ժխտելու ցանկացած երկրի փո-թաջանութիւնը ինքնին դատապարտելի երեւոյթ է: Բայց առաւել վիրատրական է, երբ այդ երկիրը փորձում է ճնշել կատարած ոճրի քննարկումները, ինչպէս Թուրքիան է եռանդագին կատարում: Պատկերացրէք Գերմանիայի կառավարութիւնը յայտարարում է. Երկրորդ աշխարհամարտի տարիներին մի քանի հրեաներ են մահացել, բայց դրա պատճառը հրեաների վատառողջութիւնը եւ պատերազմն էին: Հիմա երեւակայէ՞ք, Գերմանիան բողոքում է, թէ ինչո՞ւ են քանգարանները յանդ-գընում խօսել Հոլոքոսթի մասին: Իհարկէ դժար է պատկերացնել: Այդուհանդերձ 2000 թականին արեւմտեան ռազմական դաշինքի անդամներից մէկը, որը յուսակնում է դառնալ Երաւմիութեան անդամ, դիմում է նման արարք-ների: Թուրքիան երբեք չի ճանաչել հայերի ցեղասպանութիւնը՝ սահմուկեցուցիչ եւ վատերագործով յայտնի իրա-դարձութիւնները, որոնց ժամանակ բազում հայեր են կո-տորել: Աշխարհի տարբեր անկիւններում սփռւած հայեր-ը գրեթէ մէկ դար անց կրում են Յեղասպանութեան սպին... Թուրքիան պէտք է ակնյայտ մէկ ճշմարտութիւն գիտակցի, որ անցեալի սխալներն ընդունելով համաշխարհային հանրութեան առաջ աւելի լաւ եւ ոչ թէ վատ իմիջ է ունենալու: Վերջիվերջոյ, 85 տարի անց Թուրքիան պէտք է ընդունի այս տարրական ճշմարտութիւնը»: ■

Ազգ օրաթերթ
Պատրաստեց՝ Թ.Ն.

ԼՈՅՍ երկշաբաթերթը ջերմօրէն շնորհակտորում է նոր անուսնացած սիրելի զոյգերին:



**ՈՍԿԵ
ՕՂԱԿՆԵՐ**

Արմինէ Վարդանեան - Անթոն Առաքելեան
Անի Նազարեան - Վահիկ Ամիրջանեան

Հասարակական

Յեղասպանութեան վերապրողների յուշերից

Յճ՝ ճճճճճճճ ի շճ-Փճճ ճճճ Յճ
Փճ ճճճ Յճ ճճ ի Յճ ի Յճ
(ի Յճ. 1908 Յճ.)

Ես շատ փոքր էի, երեւի եօթը տարեկան էի, բայց լա՛կ կը յիշեմ: Թուրքերը եկել էին, սկսել էին թալանել, կրակի էին տուել մեր տունները եւ կրակի մէջ էին գցում երեխներն ու մեծերին: Ինձմէ մեծ քոյրս կրակի մէջ այրեց, ես ալ տեսայ իմ աչքերով: Մօրս ալ կրակի մէջ նետեցին, ա՛յ ալ ես կը յիշեմ, քանի որ երբ ինձ նետեցին, ես չորեքքաթ դուրս պրծայ կրակի միջից, բայց ծունկերս աղտո՛ր մը վառել էին, մի՛նչէս հիմա տեղերը կան, տե՛ս, (ու նա ծնկները բացեց, որ ցոյց տայ, այրածքի հետքերը):

Ալ չգիտեմ ում հետ էի, բայց թափոքի հետ ես ալ արտը գնացի. ո՛չ տէր ունեմ, ո՛չ տիրական: Էրզրումից Դի-արբէքիւր ուղքով տարին: Անտեղէն ալ չալէպ, յետոյ ալ՝ Պոլիս...

Կը յիշեմ, որ թուրք բէյ մը ինձի վերցրեց տարաւ իրեն տունը, ծնկերիս դեղ քսեցին, իմ անունը Ֆերիդա դրին: Այդտեղ կար ինձմէ մեծ մի ուրիշ հայ աղջիկ մըն ալ, որին արդէն թուրքացրել էին, եւ մնացել էր հուն: Ես նրանից փոքր էի: Մարդիկ եկան ինձ հարցրին.- Աղջի՛կս, դու որտեղի՞ց ես:

Ես ալ ըսի.- Հայ եմ:

Դու մի ըսէր այդ մարդիկ հայ գաղթականներ են եւ լուրը գնացել հասել էր Անդրանիկ փաշային, որ բէյին տունը երկու հայ աղջիկ կայ՝ մէկը թուրքացած է, միւսին՝ ալ պիտի թուրքացնեն:

Անդրանիկը երկու անգլիացի զինուորով եկաւ, դուռը խփեց: Իմ խանութս ու բէյս գնացել էին սինեմա: Այդ թուրքացած հայ աղջիկը իջաւ դուռը բացեց. Անդրանիկը հարցրեց.- Էստեղ հայ աղջիկ կա՞յ:

Թուրքացած աղջիկը ըսաւ.- Չէ՛, չիկայ՝.- Խաբեց:

Յետոյ Անդրանիկ փաշան ըսաւ.- Եթէ բէյո՛ գայ, վաղը այդ նոր աղջկան թող բերէ քաղաքամաս: Երբ ան գնաց, աս աղջիկը ինձի չարասՅի մէջ փաթթեց, ծեծեց: Ան վաղուց թուրքացել, ւաւելի վատ էր դարձել: Ես լացի: Իրիկունը բէյս, որը իմ անունը Ֆերիդա էր դրել, տեսաւ լաց եմ լինում, ըսաւ աղջկան.- Դուս ինչ իրատունքով ծեծում էիր սրան: Թող սպասէիր, մենք կը գայինք, կը խօսէինք:

Բէյս յետոյ ինձ կանչեց.- Արի՛, աղջի՛կս, դու ի՞նչ ըսիր:

-Ո՛չ մի բան չըսի:

-Ո՞վ էր այդ մարդը:

-Չգիտեմ, ես վախցայ, չխօսեցի:

Յետոյ բէյս հարցրեց այդ աղջկան:

Ան ալ ըսաւ.- Առաւօտեան Ֆերիդային քաղաքամաս պիտի տանես:

Առաւօտեան բէյս տարաւ ինձի քաղաքամաս: Զննեցին, մեծ-մեծ գիրքեր հանեցին իբր փնտրում են, Ֆերիդա են փնտրում, չեն գտնում, վերջապէս ըսին.- Չէ՛, աս հա՛յ աղջիկ է:

Անդրանիկ փաշան ինձի արքայ կանգնեցուց, իր հետ միասին ինձի նկարեց: Վրաս գլուխս փոխեց, անձամբ տարաւ Բեշիկթաշի որբանոցը. մի՛նչէս վեցերորդ դասարան յունարէն եւ հայերէն սովորեցի: Յետոյ կա-

մաց-կամաց մեծացայ, տասնվեց տարեկան եղայ: Մի հայ կաթոլիկ մարդ ու կին եկան որբանոցը: Եկան մի աղջիկ ամենէլ, տանելու: Ինձ հաւնեցին, իրենց տունը տարին, պահեցին: Այդ մարդու տունն ալ ամուսնացայ մշեցի Ռսկանի հետ: Ան ալ գաղթած էր: Մօրաքոյր ունէր Յունաստանում: Մենք ալ անցանք Յունաստան: Տուն-տեղ դրինք: Մի տղայ, երկու աղջիկ ունեցայ: 1947 թ. եկանք Հայաստան: Տղաս մեռաւ, մէկ աղջիկս ընտանիքով գնաց ԱՄՆ: Մնացի աս մէկ՝ Վարդուհի աղջկաս հետ: Ընտանիք մենք ալ պիտի էրթանք Լոս Անջելէս ըսած տեղը: ■



Նախորդ համարի էջ 7-ի շարունակութիւնը

Բաշ Ապարանի ճակատամարտ

Ե. Սարգսեան

1918, տեղի է ունեցել մայիսի 23-29-ին: Մարդարայատի ճակատամարտի (1918) ժամանակ թուրք իրամանատարութիւնը որոշել է 9-րդ դիւիզիան ուղարկել Բաշ Ապարան՝ փորձելով Երեւան արշաւել իս-ից եւ դուրս գալ Մարդարայատի շրջանում հակայարձակման անցած հայկական զօրամասերի քիկունքը՝ նրան կտրելով Երեւանից: Թուրք այդ ծրագիրը խափանելու նպատակով հայկական իրամանատարութիւնը Մարդարայատի ճակատամարտից Դրոշի գլխատրութեամբ շտապ ուժեր (8 հզ. մարդ) է տեղափոխել Բաշ Ապարան:

Հայկ. կանոնադր զօրամասերին մեծ աջակցութիւն են ցոյց տուել ինչպէս հայ. այնպէս էլ եզդի աշխարհագորայինները՝ Ջահանգիր Աղայի գլխատրութեամբ: Մարտերի ընթացքում թուրք. իրոսակները գլխովին ջախջախւել են եւ հետ շարտուել Բաշ Ապարանից արմ.:

Բ. Ա. ճ. Մարդարայատի ճակատամարտի եւ Դարաքիլիսայի ճակատամարտի հետ կարեւոր դեր է խաղացել դէպի Երեւան եւ Արարատեան դաշտ թուրք. զօրքերի արշաւանքները կասեցնելու գործում:

Ապարանում կանգնեցւած է Բ. Ա. ճ-ի հերոսների յուշարձան: ■

Ճար. 2 եւ վերջ

ՏԻՐԱՆԻ

«Լոյս» երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- < Անահիտ Եգանեան (Մեհրաբեան)
- < Ջանի Պողոսեան
- < Արեգ Արաւհամեան
- < Մարտիկ Մելքոն Խաչատրեան
- < Մոսիկ Դարախանեան
- < Սիմոն Դազարեան
- < Գայկ Յովասափեան
- < Լեւոն Դաւթեան
- < Յովհաննէս (Յայկ) Աւագեան
- < Դկտ. Ռաթէոս Կարապետեան
- < Վաչիկ Արամեան
- < Վանիկ Ամիրեան

Մշակույթ

Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

(Շար. նախորդ համարից)

Սերոժ Թիլիմեան

Ձաքարիա եպիսկոպոսը բացառիկ հեղինակութիւն էր վայելում, որ պայմանաւորաբար էր հայ քաղաքական մտքի հակադիր դիրքերի առկայութեամբ: Թէ Կիլիկեան աշխարհիկ պետերը եւ թէ Միս քաղաքում հաստատուած հայոց կաթողիկոսները, այդ ժամանակահատուածում, մահմեդական աշխարհին դիմակայելու նախապայման էին համարում կաթողիկէ եկեղեցու գերիշխանութեան ընդունումը: Այս քաղաքական մկատառման հակառակորդների պարագլուխներն էին Միւնեսաց եպիսկոպոսները՝ որոնց կուսակցութիւնը ոգի ի բռին ջանում էր հաւատարիմ մնալ ազգային եկեղեցու օրհնութիւնին: Այս վերջին կողմի կարգախօսը գեղեցիկ ձեւով այսպէս էր ձեւակերպել Միւնեսաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանը. «Հաւան ենք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ հոռոմնոց յերկինս ելանել»:

Միս հակադիր այս թեւերի գոյութեամբ, Արտագի թեմի առաջնորդ Ձաքարիա եպիսկոպոսը, հետեւելով իր նախորդի Տիրացու եպիսկոպոսին, ջերմ պաշտպանն էր հռոմէական եկեղեցուն մերձենալու քաղաքականութեանը: Այս մասին վկայութիւններ ունեն Ֆրանցիսկեան միաբան Գանիէլ Թարիգեցին եւ դոմինիկեան կրօնատար Ժորդէն Գէ Մեւերեակը:

Ձաքարիա եպիսկոպոսը այս պայմաններում աշխատում է ի շահ իր նպատակների օգտագործել Հայաստանում եւ Ատրպատականում գործունէութիւն ծաւալած կաթողիկէ քարոզիչների ազդեցութիւնն ու կշիռը եւ բնականաբար հակադրում՝ ազգային եկեղեցուն հաւատարիմ, Մեծ Հայքի աշխարհիկ եւ հոգեւոր պարագլուխներին: Ինչպէս վերեւում նշեց կաթողիկոսը եւս ընդունել էր կաթողիկէների գերիշխանութիւնը եւ իր առաքած նիւրակներով փորձում էր ընդունել տալ իր քաղաքական հայեացքները եւ յանձինս Ձաքարիա եպիսկոպոսի նա գտել էր հաւատարիմ կողմնակից:

Հայաստանի Առաքելական եկեղեցու նիւրական շահերը պահպանող հոգեւոր առաջնորդները, կաթողիկոսի եւ մասնատարաբար Ձաքարիա եպիսկոպոսի քարոզչութեանը հակահարած տալու հետ զուգընթաց, նրա ազդեցութիւնը սահմանափակելու նպատակով դիմում են գործնական քայլերի: Միս այս վերջին գործունէութեան արդիւնքն էր, որ շուրջ 1321 թականին Թարիգուն Թեմակալ առաջնորդ է կարգում Մատթէոս եպիսկոպոսը եւ հսկայ աշխատանք է կատարում Առաքելոց թեմի լատինադարան եպիսկոպոսին չէզոքացնելու համար: Մատթէոս եպիսկոպոսին յաջորդած պէտք է լինի Արտագի արքեպիսկոպոս եւ Ս. Թադէի վանահայր կոչուած Մեսրոպ վարդապետը, որ հետագայում բազմել է կաթողիկոսական գահի վրայ: Այս վերջիններիս գաղափարական հակահարածի հետեւանքով Ձաքարիա եպիսկոպոսի իրաւասութիւնից դուրս է բերում ողջ Ատրպատականի թեմը եւ 1340-ական թականներին ման Ս. Թադէի վանքը, եւ այսպիսով Ձաքարիայի յաջորդներին ժառանգութիւն է մնում քայքայուած մի թեմ, որ սահմանափակում էր

Մակի բերդի եւ Ծործորի վանքի անձուկ շրջանակներով: Պարզ չէ, որ Մեսրոպ վարդապետից յետոյ ո՞վ է գրաւել Արտագի եպիսկոպոսութիւնը եւ Ս. Թադէի վանքի վանահայրութիւնը: Գիտենք միայն, որ 1397 թ. այդ պաշտօնում է եղել Պետրոս անունով մի եպիսկոպոս, ապա տեղեկութիւն ունենք 1426 թականից, երբ Գրիգոր Մակեցի Ձալարէկեանը, ներկայանալով որպէս «աթոռակալ սրբոյն Թադէոսի», տեղեկութիւններ է գրանցում Իսքանդար Կարա-Կոյունլուի կողմից Մակի բերդի գրաւման եւ Արտագի հայկական իշխանութեան վերացման մասին:

1340-ական թականների վերջերին Ձաքարիա եպիսկոպոսին յաջորդում է երբօր որդին Տէր Տիրացուն, որ 1329 թականից աթոռակալ է իր հօրեղբոր հետ միասին եւ ապա մի քանի տարի միայնակ վարել է թեմի կաթողիկէ հայերի առաջնորդութեան պաշտօնը: 1361 թականից իրեն աթոռակալ է դարձրել մերձաւոր ազգականներից մէկին՝ Ձաքարիա անունով: Այս վերջինիս թեմակալութեան շրջանում մասնատարաբար 15-րդ դարի սկզբներին Արտագի աշխարհիկ տէրն էր պարոն Նուրադինը: Արտագի հայկական իշխանութեան, պարոն Նուրադինի եւ նրա որդիների մասին խիստ հետաքրքիր տեղեկութիւններ է փոխանցել Սպանիայի թագաւորի դեսպան Կլաւիլիսոն, որ 1403-1406 թականներին անցել է Հայաստանով: Համաձայն Կլաւիլիսոյի տեղեկութեան Լանկ Թամուրը յարձակել է Մակի բերդի վրայ (1386-1387 թ.թ.) սակայն չի կարողացել գրաւել, որի հետեւանքով Նուրադինի եւ Լանկ Թամուրի միջեւ կնքել է պայմանագիր, ըստ որի Նուրադինը Թամուրին պիտի տրամադրէր հարկ եղած պարագային քսան հեծեալ. բայց այս Թամուրը մի այլ առիթով պատանդ է վերցրել իշխանի որդուն եւ նրան պարտադրել է առերես մահմեդականութիւն ընդունել եւ տւել է Սորդաթմիշ անունը:

Սորդաթմիշին, ըստ Թ. Մեծփեցու տեղեկութեան, յաջողում է չորս այլ հայ իշխանների հետ միասին, Թամուրեանների պարտութիւնից յետոյ քրիստոնէայ ապրելու արտօնութիւն ստանալ: Այս դէպքը տեղի է ունենում 1408 թականին, երբ Հայաստանում հաստատուում են Ջելալիբեանները, դաշնակից ունենալով Կարա-Կոյունլուներին: Թ. Մեծփեցին Սորդաթմիշին ճանաչում է որպէս «տէր Մակուայ»: Նա իշխանութիւնը իր հօրից ժառանգել է հաւանօրէն 1408-1410 թականներից յետոյ: Սորդաթմիշի իշխանութեան ժամանակ Մեծ Հայքի կենտրոնական նահանգների վրայ իր տիրապետութիւնն էր հաստատել Կարա Իւսուֆ Կարա-Կոյունլուն: Կարա Իւսուֆից յետոյ Իսքանդար Կարա-Կոյունլուն 1422-1427 թականներին աշխատում է իր պետութեան սահմաններում գտնուող կիսանկախ իշխանութիւնները վերացնել: Միս այս պայքարի ընթացքում է, որ 1426 թականին վերջ է գտնում Արտագի հայ իշխանութիւնը, որ տեւել էր շուրջ մէկ ու կէս դար: Գրիչ Թումայ Միւնասեցը իր ընդարձակ իշխատակարաններից մէկում յուզիչ տողերով է անդրադարձել այդ դէպքին. «Իսկ ի յ ՊՀՁ (1427) թին է առ ըՄքանդարն

Մշակոյթ

զանառիկ բերքն Մակուայ ի ձեռաց քրիստո [նէից... եւ անմխի] թար կսկիծ ե] հաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերքն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից, եւ այն եւս առաւ ի մէջ»: Իշխանութիւնը կորցնելուց յետոյ, կաթոլիկ դասանանք ընդունած հայերը որոշ ժամանակ պահպանել են իրենց գոյութիւնը եւ մեծ մասամբ կենդանացած են եղել Ծործորի Ս. Աստուածածին վանքում եւ Կեծուկ գիւղում: Մակայն երկար չկարողանալով դիմանալ, 17-րդ դարի վերջերին հաւատափոխ լինելով մահմեդական են դարձել:

17-րդ դարի սկզբին, պարսկա-բրքական երկարատեւ եւ արհմահեղ պատերազմների ընթացքում Հայաստանի այլ վայրերի հետ միասին տուժում է նաեւ Արտազահայութիւնը: Այս շրջանի հայութեան երկրորդ խոշոր արտագաղթը տեղի է ունեցել Շահ Աբբասի յայտնի գերեզմանութեան ընթացքում: Նոյն ժամանակաշրջանի պատմագիր Առաքել վարդապետ Դարիժեցին Հայաստանի այլ շրջաններից հաւաքած գաղթականների մէջ նաեւ յիշատակում է Մակուն եւ հարեւան գաւառները. «...եւ բովանդակ զերկիրն Ալաշկերտու եւ զգեղորայսն Մակուայ եւ զերկիրն Աղբակու եւ զՄալմաստու եւ զԽոյայ եւ զՌում...»:

Պարսից թագաւոր՝ Նադիր Շահին մատուցած ծառայութեան հետեւանքով Բայեթ ցեղախմբի Ահմադ-Սուլթանը տիրանում է Մակին: 1747 թականին Նադիր Շահի սպանութիւնից յետոյ թուլանում է Պարսկաստանի կենտրոնական իշխանութիւնը, որի հետեւանքով աշխուժանում են կենտրոնախոյս ձգտումները: Այս խնդրի հետեւանքով Արեւելեան Հայաստանում եւ Ատրպատականում կազմաւորւած Երեւանի, Նախիջեւանի, Գարաբաղի, Խոյի, Մակի, Ուրմիայի եւ մի քանի այլ խամութիւններ ինքնուրոյն իշխանութիւն են ձեռք բերում, որոնք մերթ ընդ մերթ արհմալի ընդհարումների են դուրս գալիս միմեանց դէմ: Այս բախումների ընթացքում առաւելաբար տուժում էին տեղի հայ ազգաբնակչութիւնը: Մակի խամութիւնը Պարսկաստանի արքունիքում ուներ կշիռ եւ համարում: Բայեթ ցեղապետ Ահմադ-սուլթանին յաջորդած Հիւսէյն խանի ժամանակ էր, որ Պարսկաստանի վարչապետ է նշանակուում Սիրգա-Աղասին:

Ռուս-պարսկական պատերազմից առաջ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդի նստավայրն էր դեռեւս Ս. Թադէի վանքը: Թեմի իշխանութեան տակ են եղել Մալմաստը, Բայազետը, Աղբակը, Բարդուղիմէոսի վանահայրութիւնը: Նրա իշխանութիւնը տարածել է նաեւ, բացի Ատրպատականից, Պարսկաստանի հայ ազգաբնակչութեան վրայ:

19-րդ դարի սկզբներին Ս. Թադէի վանքի վանահայր նշանակւեց Միմէն Արքեպիսկոպոս Բզումին: Նրա առաջին գործը եղաւ ընդարձակումը: Քանդեց սեւ քարերով շինւած տաճարի արեւմտեան կողմը եւ կառուցել տեց Էջմիածնի մայր տաճարի մնացորդները արեւմտեան նոր յանգումը: Մակայն նոր շինութիւնը աւարտին չի հասնում: 1820 թականին Միմէն Արքեպիսկոպոսը նշանակուում է Ագուլիսի Ս. Թովմա վանքի վանահայր:

1827 թականին պայթում է ռուս-պարսկական պատերազմը: Ռուսական բանակը գրաւում է Ատրպատականը. պարսիկները պարտադրւած են լինում կնքել Թուրքմենչայի հաշտութեան դաշնագիրը:

Արտագի հայութեան երրորդ խոշոր տեղահանութիւնը տեղի է ունենում 1827-1828 թականների ռուս-պարս-


կական պատերազմից յետոյ: Թուրքմենչայի դաշնագրով հայերին իրաւունք է տրուում գաղթելու ռուսական կայսրութեան գրաււած հողամասերը՝ Արեւմտեան Հայաստան:

Ընդհանուր գաղթականութեան թիւն է եղել 8249 ընտանիք («Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան») Մոսկով, 1832 էջ 94) կամ մօտաւոր հաշուով 40-50 հազար հայութիւն: Արտագ-Մակուն իբրեւ սահմանաներձ գաւառ բնականաբար աւելի յարմար դիրքի վրայ էր գտնուում գաղթականութեան համար: Թուրքմենչայի դաշնագրից չանցած 15 տարի, Ատրպատականի հայութեան հոգեւոր կենտրոնը Ս. Թադէի վանքից տեղափոխուում է Թարիզ, որովհետեւ Արտագ գաւառում նագել էր հայ ազգաբնակչութեան թիւը: Ռուս-պարսկական պատերազմից յետոյ, Թուրքմենչայի դաշնագրի ընձեռած հնարաւորութեան շնորհիւ աւելի քան երեսուն գիւղեր վանքի շրջակայքից եւ վիճակից գաղթել են Արեւելեան Հայաստան: («Արարատ, 1898, Յունւար, էջ 38»):

1890-ական թականներից, երբ բուռն թափ ստացաւ ազատագրական պայքարը, Ս. Թադէի վանքը դարձաւ զինատար խմբերի հիմնական կայաններից մէկը, իսկ Արտագը դէպի Վան-Վասպուրական մեկնելու կարեւոր ճանապարհը. յեղափոխական գրականութեան մէջ վանքը ճանաչուում է Մեծատր անւանումով:

Թուրքական սահմանադրութիւնից (1908) առաջ Արտագ գաւառը ապաստանավայրն էր կոտորածի ընթացքում Արեւմտահայաստանից փախուստ տուած գաղթականների, այդ պատճառով է, որ 20-րդ դարի սկզբին տուկոսային աճ է ցոյց տալիս գաղթականների թիւը գաւառում: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում վանքը հանդիսացել է նաեւ կամաւորական խմբերի կայաններից մէկը:

Պատերազմի նախօրեակին եւ ընթացքում ռուսական բանակի գոյութիւնը Ատրպատականում նպաստաւոր կացութիւն էր ստեղծում քրիստոնէայ ազգաբնակչութեան համար: Մակայն 1917 թականի վերջերին բոլշեւիկեան յեղափոխութեան քարոզչական լօզունգների ազդեցութեան հետեւանքով՝ ռուսական բանակը սկսում է քայքայել եւ մահանցել: Ատրպատականի սահմանաներձ հայ եւ ասորի փոքրամասնութիւնը ինքնապաշտպանութեան նպատակով աշխատում են զինւած ջոկատներ կազմել: Հակառակ տեղացի մահմեդականների գրգռութիւններից՝ հայերը անհարկի ընդհարումների տեղիք չուտալու համար խուսափում են պարսիկների հետ բախուելուց: Աշխատում են հաւաստիացնել, որ զինւած ջոկատները պարսիկ պետութեան դէմ գործունէութիւն չեն ցուցաբերելու: 1918 թականի Մայիսի 30-ին տաճկական զօրքը գրաւել էր Թարիզը, Մարաղան եւ երկաթուղու գիծը մինչեւ Ջուլֆա: ■



Ճար. 5

Տեսակցութիւն (Շարանից)

Ռոբերտ Եսայեան

Ճակատագիր



Երկու տարբեր՝ սեւ ու սպիտակ օրեր՝ նոյն աչքի մէջ, նոյն հողի վրայ, նոյն երկրնքի տակ: Եւ այդ երկու տարբեր օրերը անասելի ուժով ինձ ձգում են դէպի իրենց շրջապատը, որի այիքների մի մասը քրքրում է յիշողութիւնս, հանում է իմ մտքերից կապոյտ ծալաւէններ, փռում ճանապարհների, միւս մասը սեղմում է ինձ, դարձնում վշտի կծիկ: Եւ այդ շրջապատից դուրս գալն արդէն անհնարին է դառնում:

Ակամայից մտաբերում եմ Քարինտակ գիւղի մասին իմ չնկարահանած Ֆիլմի սցենարը, որը չորացած մի ծաղիկ է՝ յուշերիս գրքի մէջ դրած: Չորացած, բայց դեռեսս հին օրերով ու մտայղացումներով բուրոյ: Ըստ այդ սցենարի, պիտի կանգնէի գիւղի դիմացի դաշտում այնպէս, որ կադրում ընդգրկելը գիւղի տեսարանը, եւ արտաբերէի այս խօսքը. «Հեռից մայրող գիւղը նմանեցնում է զինուորի, որն այս հսկայ քարածայռը կրում է՝ որպէս վահան»:

Ինձ համար պարզ է հիմա, թէ այս պատկերը ինչ գծերով է մնացել կապւած կեանքին եւ ինչքան է հեռացել իրականութիւնից: Այս հսկայ քարածայռից հարեւան թուրքերը քարեր էին գլորում դէպի տները՝ փորձելով այդպէս ընկճել գիւղի բնակիչների աննկուն ոգին: Դրանով չբարարուելով, օրէցօր ատելի էին կատարելագործում բարբարոսութեան եղանակները, պայթուցիկ միջեր ու սարքեր տեղադրելով մեքենայի անւաղողերի մէջ, գլորում էին ժայռից: Մի անգամ պայթուցիկ հարածն իր վրայ վերցրեց եկեղեցին, փրկելով գիւղը: Բարեբախտաբար, եկեղեցու բակում այդ պահին մարդ չկար. սովորաբար երեխաներն այստեղ խաղում էին մինչեւ ուշ գիշեր:

Գիւղի հին ճանապարհը, որ յոգնած հնձուորի պէս հեկիհեւ բարձրանալով եւ քրտնած ճակատը սրբելով խոտերի թաշկինակով, ջուր էր խմում Շուշիի ակունքներից ու յետոյ իջնում դէպի Ստեփանակերտ, հիմա ընկել է ... Չինուորի՞ պէս, թէ՞ խաչի ...

Իսկ նոր ճանապարհը, որ թէ եւ հնի համեմատութեամբ կրկնակի երկար է, իսկ անձրեւտ ու ձիւնոտ օրերին՝ դժուարանց, գիւղի բնակիչների համար դարձել է կեանքի ու գոյատեւման ճանապարհ: Այդ ճանապարհն ինձ առաջին անգամ է գիւղ տանում, այն էլ տխուր առիթով: Իմ աչքի առաջ անվերջ օրօրում է Էդարդ Յովսէփեանի դիակը: Այդպէս արիւնն է մղում դէպի սիրտը, մինչ սրտի մէջ ցան է շարժում: Այդպէս թռչունն է ճախրում դէպի իր բոյնը, երբ բոյնը ... վառնգած է:

Կանաչների վրայ անշարժացած ափղ՝ մորթած եղնիկի երազկո տ հայեացք...

Տարիներ առաջ, երբ ես Քարինտակ գիւղն էի եկել՝ մասնակցելու բարեկամիս հարսանիքին, հաղորդակցել

էի գիւղի ոգու մի այլ էջի հետ. դա ուրախանալու արեւտն է, որ քարինտակցին կատարում է այնքան իւրայատուկ ու վարակիչ ձեւով:

...Երկու տարբեր՝ սեւ ու սպիտակ օրեր՝ նոյն աչքի մէջ, նոյն հողի վրայ, նոյն երկրնքի տակ ...

Էդարդի դիակի վրայ սգացող հարազատների ձայնը կտրատում է օրայ շոգը, եւ նրա ճեղքերից զովութիւն չի թափում բակում եւ տանը վշտից կծկւած բարեկամների վրայ, այլ մաղում են կսկիծի ու ավստասանքի ծաղկաթերթեր:

Ահա դազաղն իջեցնում են փոսի մէջ, դազաղի հետ՝ մաւե հարազատների սրտերից պոկւած աղաղակ-կսկիծը:

Մարդիկ մի-մի բուռ հող են գցում դազաղի վրայ, որ բացածքը սպիանայ, մի-մի բուռ հող են գցում՝ ամէն պահ մտածելով, որ վերելի ժայռից յանկարծ կարող են կրակել: Աստուած իմ, էս ինչ անխիղճ դարի ենք հասել. մարդ չի կարողանում անգամ «մարդ թաղել մարդու նման»: Մի-մի բուռ հող են գցում դազաղի վրայ եւ Ռուսաստանից ժամանած հիւրերը՝ ռուս գրողներն ու քղթակիցները: Քարինտակ գիւղի բնակիչները երբեք չեն մոռանայ Ինեսա Բուրկովայի արցունքը, ռուս կնոջ արցունք -բողոքը ...

Էդարդ Յովսէփեան ազատամարտիկը հպարտ էր իր հողի պէս, իր հողի պէս կենսունակ էր ու շարժուն, լի երազներով, յամառ էր, ինչպէս իր հայրենի քարը, զուլայ, ինչպէս ջուրը... Հպարտ էր: Դրա համար էլ գերադասեց... սպանել, քան գերել, քան ենթարկւել ստորացումների...

«Ինչո՞ւ պիտի ես ճորտ լինեմ իմ հայրենի հողի վրայ: Ինչո՞ւ տանտէր չլինեմ իմ սեփական տանը: Ինչո՞ւ չընդվզեմ, երբ ապտակում են: Ինչո՞ւ՞ չուղղեմ, երբ ծռում են ... Ինչո՞ւ ... Ինչո՞ւ ... Ինչո՞ւ ... »:

Ամէն օր այս հարցերն էր տալիս նա ինքն իրեն եւ իր ընկերներին, չզգալով, որ դառնում էր ինքն էլ մի անպատասխան ինչու, խրտելով ու անեանալով ճակատագրի քառսի մէջ:

25.10.91 թ.



Միքելի Էդարդ, քո մահը ճրագի պէս լուսատրում է Քարինտակ գիւղի ճակատը:

Դու փակուցիք ազատագրական շարժման կեղեւի տակ, դառնալով մաքառման ոգի:

Քեզից յետոյ Քարինտակ գիւղը ոտից-գլուխ փոթորկեց եւ իր քարեղէն կամքով փշրեց խաւարի մտութիւնը, որ համարձակուել էր բարձրանալ միջնադարի վիճերից ... Քարինտակ գիւղի մարտիկները հերոսական մարտեր մղեցին ... Քարացաւ թուրքը զարմանքից ... Նրա ոգին փշրեց բազում անգամ բախուելով Քարինտակ գիւղի ոգու պարիսպներին ... Այժմ ... Շուշիի բարձրունքներից չեն կրակում քարինտակցիների վրայ: Շուշիի բարձրունքները Քարինտակ գիւղի ոգու շարունակութիւնն են:

Մի մարմին ենք մի հոգի:

Միքելի Էդարդ, քո մահը ճրագի պէս լուսատրում է Քարինտակ գիւղի ճակատը: Բո մահը, որ դարձել է գիւղի յանդուրձան ոսկէ օղակներից մէկը ...

4.09.94 թ.

èá¼Ç ≈ ñÛ¿Ý. §Páõï áí ÌÁ Ñ³Ý¹Çà»Ýù|

Արմինե Ազիզեան-Էլբակեան

«Էջեր կը պահանջւին հրաշալի արւեստագէտ Ռոզի Արմինին նկարելու կամ նկարազօրելու համար, որին լաւ են ծանաչում Ամերիկայում, Գերմանիայում, ԽՍՀՄ-ում: Պարզապէս մի քանի տողով կասեմ, որ հմայւած եմ նրա խորունկ ծայրով, որտեղ թրթում է միայնակ հոգու կարօտը: Այդ ծայրը լայն տարածքների համար է, որտեղ փչում է այն հեռաւոր երկրների աշնանային քամին, որոնց մասին մենք երագում ենք: Նրան լսելիս ասես տեղափոխուում եմ այդ անձանօթ փեղրը, որտեղ ամէն ինչ դառնում է առեղծւած եւ թախիծ»:



Չմարաւո՞ր է արդեօք Ֆրանսահայ երգչուհուն աւելի լաւ մեծարել, քան դա արել է նշանաւոր նկարիչ Գառգուն: Միաժամանակ հնարաւո՞ր է արդեօք մոռանալ, որ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրեանն ուզում էր, որ իր երգը կատարի միայն Ռոզի Արմինը:

Ռոզի Արմինի մասին շատ բան գիտեմք: Աւելին իմանալու մտադրութեամբ հարցազրոյց ունեցանք երգչուհու հետ:

-Ռոզի, կարո՞ղ եմ խնդրել, որ ձեր կարիերայի պատմութիւնը համարէք դրա առաւել տպատրիչ պահերի յիշատակումով:

-Ինձ համար ամենամեծ պահը առաջին համերգս էր Հայաստանում, առաջին շփումը հայրենակիցներիս հետ: Նաեւ ուժեղ տպատրոսիւններ թողեցին հանդիպումներս նշանաւոր անձանց, մասնատրապէս մեծ մայետրօ Խաչատրեանի հետ, որի երգերից մէկը ես ամբողջովին փոխել էի եւ վախենում էի, որ դա դուր չի գալ նրան: Բայց ընդհակառակը, նա տիկնոջ հետ եկաւ իմ օթեակը, բռնեց ձեռքս եւ ասաց. «Փոքրիկս, դու վերածնեցիր իմ երգը, եւ ես ուզում եմ քեզ ուրիշ երգեր առաջարկել»: Այդ խօսքերից ես արտասուեցի: Իսկ Աննօ Բարաջանեանն ամէն համերգից յետոյ գալիս էր ինձ տեսնելու, որպէսզի գնամ իր ընտանիքի հետ ճաշելու, եւ մինչեւ վաղ առաւօտ նստում էր իր ստեղծագործութիւնները՝ առաջարկելով որեւէ բան ընտրել երգացանկի համար: Գրանք անմոռանալի երեկոներ էին: Իսկ երբ ես առաջին անգամ երգեցի Իրանի շահի պալատում, անչափ գոհունակ տեսքով շահը մօտեցաւ եւ հարցրեց իմ ծագումը: Մեծ հպարտութեամբ ասացի, որ հայ եմ:

-Ո՞րն էր ԽՍՀՄ-ի պէս մի երկրում՝ «երկաթ վարագոյրի» ետեւում ձեր ունեցած այդ յաջողութեան գաղտնիքը:

-Հաստատ չգիտեմ, բայց պատճառը թերեւս այն էր, որ գնացել էի եւրոպայից՝ «երկաթ վարագոյրի» միւս կողմից, ուստի հասարակայնութիւնը սիրահարեց ինձ: Ինձնից առաջ այնտեղ եղել էին Սիմոնա Սինտօրէն, Իվ Մոնտանը, Շառլ Ազնաւուրը եւ Ժիլբերտ Բեկօն: Ես այդ աւանդոյթը շարունակող երկրորդ կինն էի: Իմ Ֆրանսի-

ական երգացանկը, անկասկած, բաժին ունէր այդ յաջողութեան մէջ, քանի որ ռուսները մնում են Ֆրանսիական մշակոյթի մեծ սիրահարներ:

-Մոզական բան չկա՞յ արդեօք այն փաստի մէջ, որ հազիւ 25-ամեայ արւեստագէտն արժանացաւ «Օլիմպիայի» տնօրէնի վստահութեանը:

-Կարծում եմ, որ ԽՍՀՄ-ում իմ յաջողութիւնների վերաբերեալ Ֆրանսիական մամուլում բազմաթիւ յօդածների հրապարակումից յետոյ, չխօսելով արդէն «Հինգ կարետր սինակ» յաղորդման մասին, «Օլիմպիայի» տնօրէնը գուցէ ցանկացաւ ինձ հրաւիրելով փարիզեան հանրութեանը նոյնպէս հնարաւորութիւն տալ ունկնդրելու ինձ: «Օլիմպիայում» իմ ելոյթից յետոյ «Մոնտէ Կառլօ» ռադիօկայանը ինձ խնդրեց 60 օրում հանդէս գալ 60 քաղաքներում: Հետագայում արտասահմանում ամէն կողմից հրաւիրում էին ինձ:

-Ի՞նչը ձեզ դրդեց թողնել Ֆրանսիան եւ 15 տարով հաստատուել Իսպանիայում:

-Գեռ մանկուց պաշտում էի Իսպանիան, նրա պարերը, հիանում Լուիս Մարիանոյով: Մի խօսքով, թուրքիւն ունէի այդ երկրի հանդէպ: Եւ երբ առաջին անգամ Իսպանիան ինձ հրաւիրեց որպէս երգչուհու, դրանից անմիջապէս յետոյ շատ կարետր պայմանագիր ստորագրուեց: Չայնասկաւառակների իսպանական Ֆիլմաներից մէկը ինձ առաջարկեց համերգային շրջագայութիւններ կատարել Իսպանիայում եւ իսպանախօս բոլոր երկրներում: Կարծում եմ, դա շատ կարետր եղաւ իմ կարիերայի համար: Բացի դրանից, բախտ ունեցաւ հանդիպելու Խուլիօ Իգլեսիասին, որն իսպաներէնի իմ առաջին ուսուցիչն էր: Ի դէպ, Մադրիդի հայկական փոքրիկ համայնքն ինձ համար իսկական մեծ ընտանիք էր: Որդու մկրտելու համար հրաւիրեցի Գիտ արք. Նազգաշեանին, եւ առաջին անգամն էր, որ յունարաւան եկեղեցում մարդիկ ներկայ էին գտնում հայկական ծէսի:

-Ձեր ամուսնու մահից յետոյ չվարանեցիք ընդհատել ձեր կարիերան, որպէսզի զբաղւէք երկու որդիների դաստիարակութեամբ: Նրանք ի՞նչ ճանապարհ են ընտրել:

-Այո, զուակներս դեռ փոքր էին, երբ ահաւոր դժբախտութիւն վիճակեց ինձ, եւ ես ցաւալի զգացողութիւն ունեցաւ, երբ իմ մի շրջագայութիւնից յետոյ որդիս աւելի մեծ ջերմութիւն հանդէս բերեց դաստիարակչուհու, քան իմ հանդէպ: Այդ պահից որոշեցի անձամբ զբաղել իմ զուակներով: Ներկայումս աւագ որդիս Փարիզի երաժշտական մանկավարժական դպրոցի շրջանաւարտ է, ժամանակակից երաժշտութիւն է յօրինում կինոյի եւ վաերագրական Ֆիլմերի համար: Ինչ վերաբերում է երկրորդ որդուս՝ ԲաՖՖիին, նա խորհրդատու է չհարկւող եկամտուների գծով:

-Կարելային հեռուստատեսութիւնը ձեր թոյլտւութիւնը խնդրեց այն հաղորդումը վերահեռարձակելու համար, որ «Հինգ կարետր սինակը» նիւրել էր ձեր մակուկեան յարթանակներից: Ե՞րբ է նախատեսուած վերահեռարձակումը: Դա յարմար առիթ չէ՞ արդեօք Ֆրանսիական բեմ վերադառնալու համար, կատարելով ձեր հաւատարիմ երգերպագումների մադթանքը:

-Հաղորդումը նախատեսուած է առաջիկայ ամիսներին, բայց ստոյգ ժամկետը դեռ ինձ չեն յայտնել: Այդ առաջարկութիւնն ինձ մեծ հաճոյք պատճառեց, քանզի ասպացուցում է, որ Ֆրանսիան չի մոռացել իմ ունեցած յաջո-

Մշակոյթ



Դերասա՞ն եմ

*Գրիգոր Զաքինեան
Շեղիա*

2001 թ. Նոր Տարի

Մէկը չկայ, որ հասկանայ դարդերս,
Մարդկանց միջում լաւ եմ խաղում իմ դերս,
Ծափ եմ տալիս ամէն շարժիս ձեւածին,
Կարծում եմ, թէ դերասան եմ բնածին:

Սրտիս միջում բազմացել եմ քանի տակ,
Միրտս ուռչել-լցել է կուտակ-կուտակ,
Արի ու տես մարդկանց աչքի տեսածին.
Ասում եմ թէ,-դերասան ես բնածին:

Ես ի՞նչ անեմ, որ հասկանան դարդերս.
Էլ չխաղամ կեղծ ու պատիւր իմ դերս,
Ինչպէ՛ս վարեմ ես այս մարդկանց արածին,
Որ ինձ չասեն, դերասան ես բնածին:

Որոշ մարդկանց՝ ես իմ սիրտս բաց արի,
Մէկի մօտ էլ՝ ես իմ աչքս թաթ արի,
Ինձ լսեցին ու ժպտացին քարածին,
Ի՞նչ էք կարծում, դերասա՞ն եմ բնածին...

☆☆☆

Ասում եմ կարապն իր կեանքի վերջում,
Մի երգ է երգում ու կեանքը հանգչում,
Ով որ կարապի երգերը լսի,
Պէտք է, որ նրա մահուան սպասի:

Ես էլ վերջերս երգել եմ ուզում,
Բայց վախենում եմ ու սիրտս յուզում,
Չլինի յանկարծ, որ ձայնս լսեն.
Լսողները իմ մահուան սպասեն:

☆☆☆

Տարիները կը նորանան,
Տարիքները կը հինանան,
Շատ բաներ կան՝ կը վերանան,
Վերանալով, վերանալով:

Ամէն ինչն է փոփոխակի,
Նոր գարուն, նոր վարդ մեխակի,
Նորից երգեր, նոր սոխակի,
Սոխակներով, սոխակներով:

Այսպէս է միշտ եկել,անցել,
Ջաղացի պէս պտոյտ դարձել,
Հներից բան չի մնացել,
Չմնալով, չմնալով:

Ես իմ կեանքում շատ ապրեցի,
Կեանքում ապրել շատ սիրեցի,
Շատ բան տեսայ, շատ գրեցի,
Միշտ գրելով, միշտ գրելով:
Շնորհատր այս նոր տարին,

Չարը դիպչի սար ու քարին,
Ցանկանում եմ ես միշտ քարին,
Բարիներով քարիներով:

դուքիւնները: Ինչ վերաբերում է Ֆրանսիական բեմ վերադառնալուն, ինչո՞ւ ոչ, հաճոյքով կը վերադառնամ, բայց դա սպազայի հարց է, քանի որ ներկայումս նախապատրաստում եմ ԱՄՆ-ում իմ շրջագայութիւններին:

-ԱՄՆ-ի հայ համայնքը կանոնաւոր կերպով հրաւիրում է ձեզ: Այս անգամ ի՞նչ ծրագիր էք ներկայացնելու:

-Կը լինեն Ֆրանսիական նոր երգեր: Կերգեմ նաեւ ռուսերէն, իսպաներէն, պարսկերէն: Կը լինեն Պասկալ Մերենի խօսքերով ինձ համար Միշել Լեգրանի, Արամ Խաչատրեանի գրած երգերը: Դարակզբի որոշ հայկական երգեր կը կատարեն ժամանակակից երաժշտական մշակմամբ:

-Լսել եմ, որ չնայած ձեր հանդէպ Պասկալ Մերենի տածած հիացմունքին, ստիպած էք եղել մեծ ջանքեր գործադրել նրա վերջին հաղորդումներից մէկի ժամանակ հայերէն երգելու համար:

-Դա ճիշտ է, քանզի Պասկալը նախապատուութիւն տալիս է Ֆրանսիական երգերին: Բայց պատահում է նաեւ, որ նրա հաղորդումների ժամանակ հնչեն ռուսական, հրէական եւ այլ երգեր: Հարկ եղաւ, որ ես մեծ համառութիւն գործի դնեմ հայկական երգ երգելու համար: Ի վերջոյ նա տեղի տւեց:

-Մովորաբար չէք մասնակցում համայնքի ձեռնարկումներին: Կարո՞ղ եմ արդեօք դրանից եզրակացնել, թէ Ֆրանսահայ համայնքը կարծես թէ տեղեակ չէ ձեր Ֆրանսիա վերադարձին:

-Հնարաւոր է, որ չիմանայ իմ վերադարձի մասին: Այդուհանդերձ կարծում եմ, որ ոմանք քաջատեղեակ են:

-Հարկ կը լինի՞ արդեօք նոր հանրագրեր կազմել, որպէսզի տարիների բացակայութիւնից յետոյ որոշէք կրկին հանդէս գալ Հայաստանում:

-Շատ լաւ է ասած: Իրօք, Հայաստանում մենահամերգ տալու առաջարկութիւններ ունեցել եմ: Չեմ կարող ասել, թէ ստոյգ երբ կը լինի, բայց չի ուշանայ, քանզի շատ եմ սիրում իմ ժողովրդին եւ լատագոյն յուշեր եմ պահպանում նրա ընդունելութիւնից: ■

Խաչքառ համար 18-ի լուծած տարրերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	u	Ֆ	ի	ն	ք	u	■	ք	ու	մ	ա	մ	ա	դ	ա
2	ա	ր	Օ	ա	ք	ա	ք	ա	2	■	ն	ա	ր	դ	ի
3	մ	ա	■	զ	ա	ր	ու	ն	■	ի	ն	ն	u	ու	ն
4	ի	զ	ն	ա	տ	■	իս	■	մ	է	ա	կ	■	ու	ա
5	■	մ	ն	ն	■	վ	ա	հ	■	ն	■	ու	կ	■	դ
6	u	ն	իս	■	զ	ա	ր	ն	ա	ն	ա	ց	ա	■	■
7	ի	ն	լ	ն	ր	u	ի	ա	■	ու	u	■	ք	ա	լ
8	ո	տ	ա	մ	ա	տ	■	ք	ու	■	ն	u	ա	յ	ի
9	ն	■	Օ	■	2	ա	ք	ա	ք	ա	ք	ն	ր	ք	■
10	■	կ	ու	u	ա	կ	ա	ն	■	ր	ո	պ	է	■	2
11	իս	ա	ք	ա	ր	ն	լ	■	զ	ա	ն	ա	■	ու	ա
12	ա	ր	իւ	ն	ա	լ	ի	ց	■	Օ	■	լ	ա	ն	զ
13	ք	ա	ն	ա	ն	■	կ	ա	հ	ա	լ	ո	ր	ն	լ
14	ն	u	■	մ	ո	մ	■	ն	ա	ն	ա	ր	■	ց	ո
15	լ	ի	ն	■	ց	ի	ն	■	ց	ի	ց	■	զ	ի	ն

Մշակոյթ

Նոր ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

ե) *բ* եւ *փ*

1. *Բ* բաղաձայնից յետոյ լսուած եւ գրուած է *փ* հետեւեալ անհնչիւնափոխ բառարմատներում կամ իբրեւ արմատ գիտակցող բառերում:

արփի (արեւ) երփն (-երանգ)
տարփանք փրփուր

2. *Ք* բաղաձայնից յետոյ միւս բոլոր անհնչիւնափոխ բառարմատներում եւ դրանցով բարդած բառերում, եթէ լսուած է *փ*, գրուած է *ք*. օրինակ՝

արբանյակ	արբեցողություն
արբունք	արյունարբու
բորբ	բորբոսնէլ
բորբոքել	դարբին
լիրբ	որբ
հարբել	հարբուխ
ծերբակալել	երբ
երբեմն	երբեք
երեսարբիչ	ներբան- (ոտքի տակի կողմը)
ներբող	նուրբ
ներբություն	ուրբաք

եւ այլն:

3. *Ղ* բաղաձայնից յետոյ լսուած եւ գրուած է *փ* հետեւեալ բառերում.

հղփանալ
փողփողել

4. *Ղ* բաղաձայնից յետոյ անհնչիւնափոխ բառարմատներում եւ դրանցով բարդած բառերում, եթէ լսուած է *փ*, գրուած է *ք*.

աղբ
աղբյուր (արտասանուած է՝ ախայյուր)
աղբյուս
բողբոջ
եղբայր (արտասանուած է՝ եխայայր)
ողբ
ողբերգություն եւ այլն:

ֆ) *գ* եւ *ք*

1. *Բ* բաղաձայնից յետոյ գրուած եւ արտասանուած է *ք* հետեւեալ արմատներում եւ որպէս արմատ գիտակցող բառերում.

արքա	կիրք
հերքել	ներք (ուստ,- ին,- եւ)
քուրք	քրքիջ
քրքրել	սարք
թուրք	

2. *Ք* բաղաձայնից յետոյ, եթէ լսուած է *ք*, գրուած է *գ* միւս բոլոր անհնչիւնափոխ բառարմատներում.

թարգման	Սարգիս
պարգել	երգ
կարգ	արգելք

եւ այլն:

Երկշարք բաղաձայններից՝ *ռ* եւ *ր*, *ղ* եւ *լ* զոյգերի վերաբերեալ նոյնպէս կան օրինաչափութիւններ:

ց) *ղ* եւ *լ*

Անհնչիւնափոխ բառարմատներում եւ դրանցով բարդած բառերում բաղաձայնից առաջ լսուած եւ գրուած է *լ* հետեւեալ բառերում.

ալխտ (ցաւ, հիւանդություն)	վախճան
ապուխտ	բախտ
զմրուխտ	երախտիք
ժխտել	պանդուխտ
տախտակ	ուխտ
թախտ	սխտոր
նախշուն	թուխտ
թուխտ	դրախտ
լախտ	խրոխտ
դժոխք	

եւ դուխտ վերջաւորող յատուկ անուններում. օրինակ՝ Չայկանդուխտ, Խոսրովանդուխտ, Սանդուխտ:

2. Մնացած բոլոր դէպքերում անհնչիւնափոխ բառարմատներում եւ դրանցով բարդած բառերում բաղաձայնից առաջ, եթէ լսուած է *լ*, գրուած է *ղ*.

աղբ	աղտ (կեղտ)
աղքատ	թուղթ
մաղթել	աղբյուր
հաղթել	չղջիկ
խեղդել	ուղտ
ողբ	մաղծ
դաղծ	ողջ
չեղջ	դեղծ

եւ այլն:

հ) *ռ* եւ *ր*

1. Անհնչիւնափոխ բառարմատներում *ճ*-ից առաջ լսուած եւ գրուած է միշտ *ռ*.

դառնալ	բառնալ
խառնել	զառնուկ
դռնակ	նռնակ
սառնություն	ծեռնարկ
փռներ	բռնել
եղեռնագործ (հանցագործ)	մեռնել

եւ այլն:

Շար. 4

Մանկական

Մեր դպրոցը մի սուրբ տաճար, Մեր դպրոցը վառ կանթեղ

Դպրոցի վերջին օրը

Վերջին անգամ բոլորս հաւաքուած էինք դպրոց, լսելու մեր քննութիւնների արդիւնքը:

Մեծ սրահը լեցուն էր: Ընկերներիցս շատերը եկել էին իրենց ծնողների հետ միասին:

Շատերը ուրախ էին, որովհետեւ ամբողջ տարին լաւ էին աշխատել, եւ վստահ էին իրենց յաջողութեան վրայ:

Քիչ յետոյ՝ բոլոր ուսուցիչները ներս մտան սրահ եւ խոր լռութիւն տիրեց: Սկսեցին կարդալ քննութեան նիշերը:

Նրանց մեծամասնութիւնը փայլուն նիշերով փոխադրուեց, ոմանք էլ բարարար նիշ չստանալու պատճառով, պիտի կրկնէին նոյն դասարանը: Ես տեսայ այդ աշակերտների ծնողներին՝ թէ ինչպէս գլուխները տխուր կանխեցին ու հեռացան:

Ես իմ մասին էի մտածում...

Վերջապէս իմ անունը կարդացին: Նիշերս փայլուն էին, ծափերի մէջից անցայ եւ մօտեցայ գրասեղանին վիճակացոյցս ստանալու:

Եկայ, նստեցի իմ տեղում: Հայրիկս ասաց՝ «Ապրես, գաւակ», - թէ մայրիկս եւ թէ ինքը առանձին-առանձին համբուրեցին ինձ: Ինձ համար սրանից աւելի մեծ ուրախութիւն չկար, որտեղ նրանք մեծ բարարարութիւն ստացան:

Արդիւնքների աւարտին, սրահը կորցրեց իր խաղաղ վիճակը եւ լսում էր հետեւեալ բացականշութիւնները:

-Նոր տարեշրջանին կը հանդիպենք:

-Աշնան, աշնանը:

-Ցտեսութիւն, մնաք բարով, բարի արձակուրդ:

Օ՛հ, այդ վայրկեանին մենք միմեանց համբուրեցինք, մէկս միւսին ներեցինք մեր հաւանական անհանգստութիւն պատճառելու համար, նոյնիսկ որոշները յուզմունքից արտաստեցին:

Ես վերադարձայ ծնողներիս մօտ, որ դպրոցի մուտքի մօտ ինձ էին սպասում: Եւ վերջին անգամ յուզած նայեցի իմ դպրոցին:

Հարցեր:

1. Ի՞նչ տրամադրութեան մէջ էին աշակերտները:

2. Ո՞ր ծնողները տխուր կանխեցին իրենց գլուխները:

3. Դո՞ւք ինչպէ՞ս անցկացրիք դպրոցի վերջին օրը:

4. Կարծում եք կարող էիք աւելի լաւ աշխատել:

Խորհուրդ

Սիրելի աշակերտներ, ինչպէս զիտք ամէն մի սկիզբ ունի իր աւարտը եւ հակառակը: Դպրոցները աւարտելուց յետոյ պիտի ծրագրես այնպիսի աշխատանք, որ քո հանգստութեան, թարմութեան, ուրախութեան, զար-

նութեան եւ մանաւանդ զիտելիքների զարգացման պատճառ դառնայ:

Ուրեմն յիշիր, որ գալիք օրերը ծրագրած լինեն, որպէսզի ամռան վերջում դատարկութիւն չզգաս:

☆☆☆



Իւրաքանչիւր պարկում նկարիր այնքան կանՖետ, որքան գնդիկ է երեւում դրամապանակների մէջ:

☆☆☆

Չորս եղանակ

Թէ գարուն է նախշ-նախշուն,
Նա ինչե՞ր է մեզ բաշխում.
Շիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Ալ ու ալան վարդ շաղոտ:
Թէ աշուն է պտղաբեր,
Ի՞նչ է բերում մեզ ներ.
-Նուռ, սերկելի, տանձ, խնձոր,
Դեղձ ու խաղող մեղրածոր:
Թէ ամառ է, շոգ ամառ,
Ի՞նչ է բերում մեզ համար.
-Ցորեն, գարի ու հաճար՝
Ամէն հոգսի դեղ ու ճար:
Թէ ձմեռ է ցրտաշունչ,
Ի՞նչ է թափում լուռ ու մուգ.
-Փաթիլ, փաթիլ փափուկ ձիւն՝
Արծաթի պէս պսպղուն:

☆☆☆

Հանելուկներ

Անուն է, միշտ սիրով հնչող,
Անծայրածիր ճամփով թռչող,
Կեանքը նրան է պարտական,
Ապրող, շնչող, ամէն ինչով:



Իգվի

Այն ի՞նչ քոյր ու եղբայրներ են՝
Հետեւելով մէկ-մէկու,
Գալիս անցնում յաջորդաբար,
Ես նոյն չորս երգն են երգում:

Վարդուհանյան

Քաղցկեղի գենային ստուգումը՝ մի դժևարին որոշում



Harvard woman's health watch
Թարգմ. Լևոն Սիսյանյան

Գեների վերաբերյալ կատարած հետազոտությունները – մասնատրայել *Մարդու Գենոմ* –ի (գեների քարտեզագրում) մախազիծը հիմնովին փոփոխության է ենթարկել հիւանդութիւնների նկատմամբ մեր ունեցած պատկերացումը: Այն, ոչ միայն բարելաւել է մեր ըմբռնումը ժառանգական հիւանդութիւնների մասին¹, այլ նաեւ փոխել է քաղցկեղի ռիսկը, սրտանօթային հիւանդութիւնները, շաքարախտը եւ այլ ընդհանրացում հիւանդութիւնները արժեւորելու մեր մտողները: Այսօր կան մի շարք ախտորոշիչ տեստեր քաղցկեղի ռիսկը բարձրացնող գենային վերափոխումներ (mutations) ճանաչելու համար: Այս կարգի գենային ստուգումներից ամենից շատ եւ առատել լայնօրէն են օգտագործում BRCA1² եւ BRCA2 անունով ծանօթ տեստերը, որոնք ուղղւած են գեներում այն վերափոխումների յայտնաբերմանը, որոնք առընչւում են կրծքագեղձի եւ ձաւրանի քաղցկեղներին:

Նախապէս այդ ստուգումները կատարում էին միայն հետախուզական եւ մասնագիտացւած կենտրոններում, բայց այժմ լայնօրէն դրանք են ցանկացողների տրամադրութեան տակ:

Մակայն, գիտնականները միայն մասնակի տեղեկութիւններ ունեն այս տեստերի մասին, առ այն, թէ ի՞նչ իմաստ ունեն դրանց արդիւնքները եւ թէ կանայք որքանո՞վ են կարող օգուել դրանցից իրենց առողջութիւնը ապահովելու գծով:

Այս տեստերի ենթարկւած հիւանդների մօտ ծագում են բժշկական բնոյթի, յուզական եւ ընկերային հարցեր, որոնք վերաբերում են քաղցկեղի նկատմամբ ունակութեան աստիճանը ճշտորոշելու համար կատարւած տեստերին: Եթէ մտադիր էք առնել այդ քայլը, ապա անհրաժեշտ է ձեռք բերել հնարատրին չափ լայն տեղեկութիւն այն մասին, թէ ինչպէ՞ս է կատարւում տեստը եւ թէ ինչպիսի՞ քարոզութիւններ պատճառ են կարող դառնալ դրա արդիւնքները:

Ի՞նչ է նշանակում կրցկազեղձի քաղցկեղի գեն ունենալ

BRCA1 եւ BRCA2-ը քաղցկեղը վերահսկող/զսպող գեններ են: Բոլոր մարդիկ ունեն իւրաքանչիւր գենի երկու կրկնօրինակ եւ դրանք երբ ճիշտ են աշխատում, արտադրում են պրօտէիններ, որոնք սանձում են բջիջների աճը: Բայց, երբ տեղի են ունենում գենային վերափոխումներ (mutation) կորչում է այդ կարողութիւնը, որին որպէս հետեւանք բարձրանում է կրծքագեղձի, ձաւրանի եւ այլ կարգի քաղցկեղի վտանգը-ռիսկը: BRCA վերափոխում ունեցողների զտակները 50%-ով ժառանգում են այդ արատը: Այլ խօսքով՝ «կրծքագեղձի քաղցկեղային գեն ունենալ» նշանակում է կրել BRCA1 կամ BRCA2 վե-

րափոխւած գեներ: Ընդհանուր հասարակութեան համեմատութեամբ, BRCA վերափոխում ունեցող կանայք 3-ից 7 անգամ անելի են ենթակայ կրծքագեղձի քաղցկեղի ռիսկի: BRCA1 վերափոխումը, նմանապէս առնչւում է ձաւրանի քաղցկեղի յաւելեալ ռիսկին, ինչպէս, հաւանաբար, նաեւ հաստաղիքի եւ արանց պարագայում շագանակագեղձի (prostate) քաղցկեղին: BRCA2-ի վերափոխումը զարկ է տալիս ձաւրանի քաղցկեղի ռիսկին, պրօստատի վաղաժամ քաղցկեղին, արանց կրցքագեղձի քաղցկեղին եւ պանկրէատի, լեղապարկի ու ստամոքսի քաղցկեղին, ինչպէս նաեւ *մէլանոմա*-ին³: Մի ուսումնասիրութեան համաձայն, մի կին, որ ձաւրանի քաղցկեղ է ունենում որեւէ տարիքում, կամ 50 տարեկանից առաջ ունենում է կրցքագեղձի քաղցկեղ եւ կամ ունի ձաւրանի կամ կրծքագեղձի ընտանեկան անցեալ, հաւանական է, որ 40%-ով BRCA1-ի կամ BRCA2-ի վերափոխում ունենայ:

Ո՞վ պիտի ստուգման ենթարկի

Գենային ստուգման հաւանական քիկնածու կը համարւէք, եթէ ձեր ընտանեկան անցեալը յուշում է վնասակար վերափոխումների բարձր ռիսկ: Գլխատր մատնանրշումն է, որ ունենաք երեք կամ առաւել առաջին կարգի ազգականներ (մայր, քոյր, դուստր) կամ էլ երկրորդ կարգի ազգականներ (տատ, մօրաքոյր, երբօր կամ քրոջ զակ, խորք քոյր), որոնք ունեցել են կրծքագեղձի կամ ձաւրանի քաղցկեղ: Կասկածելի քիկնածուների շարքին կը դասւէք, եթէ՝

- Ձեր ընտանիքի անդամներից որեւէ մէկը BRCA1-ի կամ BRCA2-ի վերափոխումներ ունի:
- Ձեր ընտանիքում եղել է կրծքագեղձի քաղցկեղի դէպք նախքան 45 տարիքը:
- Ունէք մօտիկ ազգականներ, որոնք տառապում են կրծքագեղձի կամ ձաւրանի քաղցկեղով:
- Ձեր ընտանիքի մէկ անդամն ունի կրծքագեղձի երկկողմանի քաղցկեղ կամ բազմադիմի քաղցկեղներ:
- Ձեր մօտիկ ազգականներից մէկն ունի արանց կրծքագեղձի քաղցկեղ:
- Պատկանում էք հրէական Ասքանագի տոհմին:

Որոշում կայացրէք գիտակցաբար

Գենային ստուգումը բարդ գործողութիւն է, որ արագ փոփոխութիւնների է ենթարկւում: Ճիշտ է, որ ձեր նախնական օգնութեան բժիշկը կարող է լաւատեղեակ խորհրդատու լինել, բայց նման մտադրութիւն ունենալու դէպքում գերադասելի է դիմել մասնագէտի խորհրդի: Քաղցկեղի գենետիկայի գծով մասնագիտացւած ծրրագրում, սովորաբար ներառւում են գենետիկայի մասնագէտները, գենետիկայի խորհրդատուներ, ներքին հիւանդութիւնների ուռուցքաբանը եւ կանացի հիւանդութիւնների ուռուցքաբանը:

¹ Օր. Huntington's disease- սա մի հիւանդութիւն է, որն արտայայտւում է դէմքի մկանների անկանոն եւ ակամայ ջղաճճութիւններով եւ լուրջ անհանգստութիւն պատճառում ենթակային: Լ.Ս.

² BRCA – Breast Cancer (կրծքագեղձի քաղցկեղ)

³ Մաշկի քաղցկեղ, որը դրսեւորւում է մաշկի մելանոզոն գունափոխումով եւ որը յաճախ լայնածաւալ տարածւում է մարմնի այլ օրգաններ: Լ.Ս.

Առողջապահական

Նախքան BRCA գենի (կամ ցանկացած գենային) ստուգման ձեռնարկելը ձեզ պիտի նախապատրաստեք եւ գիտե՞նա՞ք, թէ ի՞նչ պիտի ակնկալել քննութեան արդիւնքից: Հաւանաբար, կը ցանկանա՞ք, որ խորհրդակցական այցի ժամանակ ձեզ ուղեկցի ձեր ընտանիքի անդամներինց մէկը:

Ընտանեկան բժշկական անցեալի մասին հաւաքագրեցէք տեղեկանք

Սկզբնական- մաղման քննութիւնների ընթացքում եւնտիկայի խորհրդատու մասնագէտը, սովորաբար կուզենայ բժշկական տեղեկութիւններ ստանալ ձեր ընտանիքի երեք սերունդների մասին, որը ընդգրկի քաղցկեղի տեսակը եւ սկզբնաւորման կէտը, որ նրանցից իւրաքանչիւրը ունեցել եւ թէ ի՞նչ տարիքում է սկիզբ առել այն:

Խօսեցէք նախքան քննութեան ենթարկելը

Բացատրե՛ք բժշկի հետ. հարկ է, որ նա ձեզ լիովին լուսարարի գենային ստուգման օգտաւէտութիւնը, ինչպէս նաեւ առկայ ռիսկը, շօշափելով ինչպէս զուտ բժշկական, այնպէս էլ ոչ-բժշկական, ընկերային հարցեր: Պիտի նաեւ խօսի ստուգման հետ կապուած ծախսի, բարդութիւնների եւ հնարատր հետեւանքների մասին. այսինքն բացատրի այն բոլորը ինչ յայտնի է եւ այն, ինչը դեռ անյայտ է վերափոխման գեներ կրողների վաղաժամ ստուգման եւ կամխարգելիչ ստրատեգիաների-ռազմավարութիւնների առմամբ, հոգեկան եւ սոցիալ հնարատր ցընցումների մասին. թէ ստուգման արդիւնքը ինչպէս է ազդել ընտանիքի այլ անդամներին, ո՞ւր տրամադրել ստուգման արդիւնքը. ի՞նչ այլ տարբերակներ կան եւ այլն: Նշման ուսուցանող գրոյցը չպիտի կատարուի հիւանդին յորդորելու կամ քաջալերելու միտումով, որպէսզի համաձայնի ստուգման ենթարկել: Յիրաւ, մի ուսումնասիրութիւն պարզել է, որ խորհրդակցական այցից յետոյ ստուգման ենթարկելու պատրաստակամութիւնը 3 անգամով մտնել է ենթակայ կամանց մօտ:

Եթէ ձեր որոշումը լինում է ստուգման չենթարկել կամ յետաձգել այն, կարող էք խնդրել ձեր բժշկին, որ ձեզ քննութեան ենթարկի իբր մէկի, որ արդէն համարում է վերափոխուած գեներ կրող: Եթէ ձեր որոշումը կատարում էք ձեր դատեր կամ մի այլ ազգականի շահը նկատի ունենալով, դա չի խանգարի, որ մոյշներ պատրաստել տաք ձեր DNA-ից, ժամանակատրապէս ամբարելու եւ հետագային քննարկման ենթարկելու համար:

Ստուգումները միատեսակ չեն

Ձեկուցագրել եւ BRCA1-ի կամ BRCA2-ի հարիրաւոր վերափոխումներ: Դրանց մէկ մասին կարող է հանդիպել բոլոր տոհմային խմբակցութիւնների մօտ: Ուրիշ վերափոխումներ յատուկ են տոհմային մէկ խմբակցութեան կամ էլ նոյնիսկ մէկ ընտանիքի: Եթէ ձեր ընտանիքում կայ կրցքագեղձի կամ ձարանի քաղցկեղ, որն առնչուած է ինչ-որ որոշակի գենային վերափոխման, ապա, այդ դէպքում բաւական է, որ ձեր ստուգումը միտուած լինի հէնց այդ վերափոխումը յայտնաբերելուն: Բազմաթիւ այլ դէպքերում պահանջում է մէկից ւսելի ստուգումներ: Օրինակ-կի համար

Աքսանագի հրէաների պարագային ստուգումներ են կատարում երեք վնասակար վերափոխումների նկատմամբ, որոնք յաճախ առկայ են լինում այդ տոհմի կամանց մօտ: Կայ նաեւ մի համապարփակ ստուգում, ուր յայտնաբերում է ճանաչուած բոլոր գենային վերափոխումները: Հետեւաբար, նայած թէ քանի վերափոխումների ստուգում է կատարում, քննութեանց ծախսը սկսում է մի քանի հարիւր դոլարից եւ հասնում մի քանի հազար դոլարի: BRCA1 եւ BRCA2-ի ստուգման ծախսը շատ ապահովագրական ընկերութիւններ յանձն են առնում վճարել: Որոշ ընկերութիւններ, սակայն, չեն վճարում այդ ծախսը, եթէ ենթական արդէն իսկ ունի կրծքագեղձի կաղցկեղ:

Ճիշտ մեկնաբանեք ստուգման արդիւնքը

Արդիւնքը ինչ էլ որ լինի, գենային ստուգումները պատճառում են ասատիկ զգացողութիւններ:

Արդիւնքը դրական լինելու դէպքում, ենթականերից շատերն առաւել ուժգին տագնապներ են ապրում քան ակնկալում է: Բայց բոլոր ուսումնասիրութիւնները չեն հասնում այդ եզրակացութեան: Մի ուսումնասիրութիւն, օրինակի համար, գտնում է, որ դրական արդիւնքը չի սաստկացնում ընկճածութեան (depression) աստիճանը, իսկ բացասական պատասխանը չի նպաստում դրա բուլացմանը: Յամենայն դէպս կան շատ կանայք, որ անորոշ իրավիճակից ձերբազատուել համարում են մի դրական երևոյթ: Շատ բժիշկներ գերադասում են ստուգման արդիւնքը ուղղակի եւ անձամբ փոխանցել հիւանդին, որը հաւանաբար կը ցանկանայ մի շարք հարցումներ անել բժշկին: Բժիշկը կը բացատրի, թէ ինչ հետեւանքներ կարող է ունենալ մի դրական արդիւնք հիւանդի եւ նրա ընտանիքի այլ անդամների համար: Հիւանդին կը տրուի գրականութիւն այդ խնդրոյ շուրջ, որպէսզի նա եւ նրա շրջապատը ի վիճակի լինեն ճիշտ ընկալել տրուած տեղեկանքը: Միեւնոյն ժամանակ կը խօսուի նաեւ այն մասին, թէ ինչպէս է կարելի հետամուտ լինել խնդրին կանոնաւոր հանդիպումներ ունենալով գենետիկայի խորհրդատուի, ուսուցչաբանի եւ վիրահատի հետ, որոնք օգտակար կը հանդիսանան ձեզ քաղցկեղի ախտորոշման եւ կանխարգելման վերաբերեալ որոշում կայացնելու խընդրում:

Դրական արդիւնքը- Մա նշանակում է, որ առկայ է քաղցկեղի ունակութիւն: Բժշկին հարցրէք, թէ այդ ինչքանով է ազդում կրծքագեղձի, ձարանի եւ այլ քաղցկեղների ռիսկի վրայ: Մի դրական արդիւնք չի նշանակում, որ դուք անպայման քաղցկեղ կունենաք եւ եթէ նոյնիսկ ունենաք, ի՞նչ տարիքում եւ որքա՞ն ծանր եւ լուրջ կարող է լինել:

Բացասական արդիւնքը- Եթէ ձեր ստուգման արդիւնքը բացասական է որեւէ գենային վերափոխման նշանակումով, որը մինչ այդ արդէն իսկ յայտնաբերուել է ձեր հիւանդ ազգականների մօտ, կրծքագեղձի կամ ձարանի քաղցկեղ ունենալու ձեր ռիսկը, հաւանաբար, արեւ-լին չէ քան ընդհանուր հասարակութեան ռիսկը: Սակայն, եթէ չունէք բաւարար տեղեկութիւններ ձեր հիւանդ ազգականների մասին, բացասական արդիւնքը չի կարող շատ էլ սրտապնդիչ լինել: Դա կարող է նշանակել, որ չէք ժամանակել BRCA1-ի կամ BRCA2-ի քաղցկեղի ունակութեան գենը, կամ էլ, եթէ քաղցկեղ կայ ձեր ընտանիքում, դրա պատճառը մի այլ գենային վերափոխում է: ■

Լող

Յուլ. Մարտիրոսեան

Ոչ մի դարաշրջան մարդկանց այնքան չի ձգել ջուրը, որքան 20-րդ դարը: Դա, իհարկէ, ջրային մարզածներին է վերաբերում: Իբրև ապացոյց կարելի է բերել երկու թիւ. 1896 թականի օլիմպիական խաղերում վիճարկել է ընդամենը 4 ոսկէ մեդալ, իսկ միւնխենեան օլիմպիադայում՝ 29-ը, որոնցից 14-ը վիճարկում էին կանայք:

Որքան էլ զարմանալի է, սակայն փաստ է, որ համաշխարհային ռեկորդների աղիսակը ոչ մի մարզածեւում այնքան արագ փոփոխութեան չի ենթարկւում, որքան լողում: Դառնէք ինքներդ, միայն միւնխենեան օլիմպիա-



դայում սահմանել է 23 համաշխարհային, 7 երոպական ու 28 օլիմպիական ռեկորդ, իսկ եթէ դրան աւելացնենք նաեւ այն, որ օլիմպիադայից յետոյ սահմանել է երկու տասնեակից աւելի նոր սահմանագծեր, ապա պարզ կը դառնայ, թէ ինչպիսի վերելք է ապրում այս մարզածեւը:

Լողի համաշխարհային պատմագրքում գրանցւել են երկնագոյն ալիքների այնպիսի աստղերի անուններ, ինչպիսիք են ամերիկացի Ջոն Վայսմիլլերը, որը տասը տարւայ ընթացքում նուաճել է օլիմպիական 5 ոսկէ մեդալ, եւ սահմանել 23 համաշխարհային ռեկորդ: Վայսմիլլերը սպորտը թողնելուց յետոյ նկարահանեց «Տարզան» հանրայա Ֆիլմում: Միւնխենեան օլիմպիադայում անգերազանցելի ռեկորդ սահմանեց ամերիկացի Մարկ Սպիտցը, որն իր հետ տուն տարաւ վեց ոսկէ մեդալ, եւ իր բոլոր լողահերթերն աւարտեց համաշխարհային ռեկորդներ սահմանած...

Օլիմպիական պատմագրքում իր ուրոյն տեղն ունի 1932 թականի օլիմպիական չեմպիոնուհի, ամերիկուհի Էլեն Մեդիսոնը, որը սահմանել է իւրայատուկ ռեկորդ: 40-ական թականներին բոլոր տասնվեց համաշխարհային ռեկորդները պատկանում էին նրան:

Սակայն, այսօր այնքան է մեծացել մրցակցութիւնը, որ նման բան այլեւս չի կարող լինել: Այժմ բարձրագոյն տիրոջ կարելի է նուաճել միայն մէկ, երկու լաւագոյն ղեպքում երեք լողատարածութիւններում, ինչպէս նաեւ, հնարատր չէ նման յաջողութեան հասնել երեք օլիմպիադաներում: Սակայն հէնց այդպիսի անհաւանական քայլ կատարեց արտոբալտի Դաուն Ֆրեզերը, որի ռեկորդը չեն կարողացել գերազանցել անգամ տղամարդիկ: 1956-60-64 թականներին նա օլիմպիական չեմպիոնի կոչումը նուաճեց 100 մետր ազատ լողաճում: Վերջին օլիմպիական ոսկին նա նուաճեց քսանութ տարեկան հասակում: Եթէ նրա նախորդները քսան տարւայ ընթացքում հարիւր մետր ազատ ոճի համաշխարհային ռեկորդը բարելաւել են ընդամենը 1,3 վայրկեանով, ապա նա ութ տարւայ ընթացքում այն բարելաւեց 4,7 վայրկեանով: 1964 թական-

նի նրա կողմից սահմանւած համաշխարհային ռեկորդը՝ 58,9 վայրկեան, մինչեւ այսօր էլ անհասանելի է բոլորին:

Ջրացատկ

Եթէ հիմք ընդունենք գրականութիւնը, ապա 16-րդ դարում արդէն մարդիկ զբաղւում էին ջրացատկով: Սակայն միջնադարում, իհարկէ, ջրացատկը այլ էր, քան այսօր:



Որքան համարձակութիւն եւ ակրոբատիկական ճարպկութիւն է անհրաժեշտ, որպէսզի ցատկի հաշւած վայրկեանների ընթացքում օդում կատարեն մի քանի գլլխապտոյտ վարժութիւն, եւ ամենակարեւորը, դրանք կատարեն գեղեցիկ:

Առաջին անգամ ջրացատկը ցուցադրեցին շեդացիները՝ 1900 թականի օլիմպիական խաղերում: Այդ ցուցադրական ելոյթներն էլ առիթ հանդիսացան, որպէսզի չորս տարի անց, 1904 թականի օլիմպիադայի ծրագրում ընդգրկւեր նաեւ ջրացատկը:

Խաղերի կազմակերպիչների առաջարկով, ջրացատկորդների մրցումների ծրագիրը յաճախակի փոփոխւում էր: Այսպէս, 1928 թականի օլիմպիադայում ընդգրկւել էր նաեւ տասը մետրանոց աշտարակից վազքով հեռացատկը:

Օլիմպիական դափնիները գրեթէ միշտ վիճարկել են Գերմանիայի, Շեդիայի եւ Ամերիկայի մարզիկները: Միայն 1928 թականի խաղերի ժամանակ եզիպտացի Միմայէլէին յաջողեց ընդգրկւել առաջատարների խմբում եւ նոյնիսկ միատրների գումարով առաջ անցնել նրանցից, սակայն մրցավարները ամերիկացիների ճնշման տակ ստիպւած եղան փոխել մինչ այդ հաստատւած կանոնադրութիւնը եւ յաղթողին որոշել ոչ թէ հաւաքած միատրների գումարով, այլ գրաւած տեղերի քանակով: Եւ եզիպտացին ստիպւած էր բարարարել արծաթէ պարգեւով:

Ամերիկեան ջրացատկի հեղինակութիւնը մեծ հարւած ստացաւ Մեյքոնի օլիմպիադայում, յանձնա Գերմանիայի 18-ամեայ մարզուհի Ինգրիդ Կրեմերի, որը նուաճեց թէ ոստնակացատկի եւ թէ աշտարակացատկի համար սահմանւած ոսկէ դափնիները: Չորս տարի անց ոստնակացատկում նա կրկին ոսկէ մեդալ նուաճեց, իսկ աշտարակացատկում բարարարեց արծաթէ պարգեւով:

Միւնխենում յաջող հանդէս եկաւ նաեւ նախկին ԽՄ չեմպիոն եւ զարաթակիր, 15-ամեայ երեւանցի դպրոցական Դաիթ Համբարձումեանը, որն ուժեղագոյնների մրցապայքարում կարողացաւ նուաճել մրցանակային հինգերորդ տեղը: ԽՄ ժողովուրդների 6-րդ սպարտակիադայում հայ ջրացատկորդը կրկին փայլեց իր վարպետութեամբ: Առաջ անցնելով իր բոլոր մրցակիցներից, Դաիթը առաջին անգամ ԽՄ զարաթի եւ առաջնութիւնների ոսկէ մեդալներին աւելացրեց նաեւ սպարտակիադայի չեմպիոնի ոսկէ պարգեւը: ■

Ժամանց

ԽԱՉԲԱՌ ՀԱՄԱՐ 20

Կազմեց
Գագիկ Անդրեասեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Հայ մեծանուն եւ անանի երաժշտագետ- քազաուր, պետ:
2. Վտանգից զգուշացնել- չաղած, անլի:
3. Արագագնաց թոթաուար, որի միջոցով հին ժամանակ նամակ էին ուղարկում- պետական գրագրութիւնները- գութանի վրայ հաստատած կոթը, որից բռնելով ուղղութիւն են տալիս խտփին:
4. Պինդ, ուժեղ- մուգ կարմիր- յատկութիւնը որոշել:
5. Առաջիկայ, ինչ որ գալու է- ժխտական նա- խածանց- յորորական, խրախուսական ձայնարկութիւն- երկրի մակերեսային բնա- կան բարձրութիւն:
6. Մուգ կարմիր- լեռան ամենաբարձր մասը, կատարը- շատ սիրուն, գեղեցկուհի:
7. Անգոյգ, մէկ հատ- համաճարակ կտորել- կուշտ, կշտացած:
8. Գոյնը նետած, դժգոյն- հին չէ- որեւէ պե- տութեան գրաւոր թոյլութիւնը մի անձի անցագրի վրայ, որով նա իրաւունք է ստանում մտնել այդ պետութեան սահմանները:
9. Ուղիղ կերպով, առանց թեքումի- տիտղոս, որը Պարսկաստանում տրուում է արատական իշխաններին կամ դրում է ան- մուններից յետոյ իբրեւ պատուանշան:
10. Ցուցական դերանուն- գոյութիւն ունենալ- որեւէ անձ այն դպրոցի վերաբերմամբ, որտեղ ուսում է ստացել- ցուցական դերանուն:
11. Խիտ գործած բրդե կտոր- վէմ, ապառաժ Ամերիկայի Միացեալ Նահանգներ:
12. Կրքերի բորբոք, յուզումն- ընդարձակ, բացած:
13. Կարմիր ներկ, որ ստացւում է մոյս անուրը կրող շատ մանր միջատից- քաղցր հիւթ, որ շատ ծաղիկներ արտադրում են տաք եղանակին եւ որը մեղուները հաւաքելով՝ նրանից մեղր են պատրաստում:
14. Անկուշտ, անյազ- նկատել, նայել:
15. Օրերի, տարիների, դարերի յաջորդական ընթացք- աչք- առանցքի վրայ պտտող առարկայ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1								■							
2									■						
3		■									■				
4				■				■						■	
5				■				■		■					■
6			■						■						
7				■							■				
8	■							■			■				
9									■					■	
10			■						■					■	
11				■					■		■				
12				■											
13						■								■	
14		■						■		■					
15								■					■		

ԼՈՒԵԷ
ԽԱՉԲԱՌ

ՍՍԱՑԷ
ՆԻԷՐ

ՈՒՂՂԱՇՆԱՅԵԱՑ

1. Թաղիքե երկայն վերարկու, որ հագնում են հովիւները- անդուրեկան, անհաճոյ:
2. Բացագանչութիւն վշտի, տխրութեան- կատաղաբար, սաստիկ զայրացած:
3. Մասրենիի կարմրաւուն թթաշ պտուղը- մի տեսակ պտուղ- հասարակութեան՝ ընկերութեան մասն կազմող իւրաքանչիւր անհատ:
4. Անպէտք, անհարկաւոր- ճարել, անյայտ բանը երեսն հանել- հովանոց, որ շինում են ամառը սար գնացողները:
5. Տանել բայի հրամայական եղանակը՝ եզակի երկրորդ դեմքի համար- կրկնուած ձայնաւոր- մարմնի մարտդական գործիքի մասերից- մայրիկ:
6. Հանգիստը կորցնել- դրական պատասխան տրուած հարցմունքին, այո:
7. Խոր վիշտ զգալ որեւէ ծանր կորուստի պատճառով- մակերեսի չափման միաւոր- կերակուր- ընդունելու եւ ձայնի անցք մարդու երեսուն:
8. Օժանդակ բայ է- մի տեղ զիջելու- առաջ չէ:
9. Փայտի կոճղ՝ չորս անկիւնի տաշած- լորձնային նիւթ, որ թելի նման ձգւած երկարացած է- ուժից ընկած, անդամալոյծ:
10. Մակերեսի չափման միաւոր- վերին, բարձր, առաւելագոյն- կարող, ընդունակ:
11. Նախկին ասածին հակառակ բան ասել- զարթ՝ կենդանի աչքերով:
12. Ժխտական նախածանց- որեւէ անդամով խել, պակասաւոր- արեւմտահայաստանի քաղաքներից, որում 1915 թա- կանին տեղի ունեցած հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մէկն է- արական անուն:
13. Մոլօ կամ փոքրաթիւ անձանց միջոցով կատարուող երաժշտական երկ- մակերեսի չափման միաւոր- ցուցական դերանուն:
14. Մանրացնել, փոշի դարձնել- պշրանք- համատիպ դառնալ:
15. Ջրի ընդարձակ տարածութիւն՝ շրջապատուած ցամաքով- խրոխտ ու հպարտ- լցւած, լեցուն:

Խաչբառ համար 18-ի
լուծւած տարբերակը
տեսնել՝ էջ 14-ում:

Ժամանց

Խոհարարական հնարամտություններ



Եթե կոմպոտի բանկայում պտուղները բարձրանում են դեպի վերև, իսկ սրգահիթը մնում է տակը, ապա անհրաժեշտ է բանկան նորից մանրեագրել (ստերիլիզացիա), ընդ որում անելի երկար ժամանակ, քան առաջին անգամ:

☆☆☆

Որպեսզի բանկայի կափարիչները չժանգոտեն, կա-րելի է նրանց թեթևակի ճարպ քսել:

☆☆☆

Կարտոֆիլը անհրաժեշտ է պահել մութ եւ սառը սեն-տակում (+3-ից +5 աստիճան):

☆☆☆

Աղ դրած եւ թթու դրած բանջարեղէնը պէտք է պահել սառը տեղ եւ հետեւել, որպէսզի նրանք միշտ ծածկւած լինեն աղաջրով: Եթէ ի յայտ է եկել բորբոս, անհրաժեշտ է խնամքով հեռացնել, ծանրոցը լվանալ, եռջրով խաշել եւ նորից դնել տեղը:



Հումոր

Պըլը-Պուղիի հեքիաթները

Մելիք- Շահնագարը Պըլը-Պուղուն շտապ կանչում է իր մօտ ու հարցնում.

-Աշխարհում քանի՞ լեզու կայ:

-201 լեզու:

-Իսկ դու քանի՞ լեզու գիտես:

-200 լեզու:

-Այդ լաւ է,- ասում է մելիքը: - Քիչ առաջ մեր տունը մի մարդ էր եկել, լեզուն չեն հասկանում, զնանք տեսնենք ինչ է ասում:

-Բա լաւ, չիմացա՞ր թէ էդ մարդը որ աշխարհից է եկել:

-Հնդուստանից է:

Պըլը-Պուղին քորում է ծոծրակը:

-Հա, մելիքն ապրած կենայ, լաւ յիշեցի, աշխարհում մեծակ հինդու լեզուն է, որ չգիտեն:

☆☆☆

Պըլը- Պուղին մտնում է եկեղեցի մեղքերը քաւելու:

-Տէր հայր,- ասում է,- շաբաթը մի անգամ եմ աղօթում:

-Մեղք ես գործում, որդեակ,- պատասխանում է քահա-նան:

-Մէկ-մէկ հայեոյում եմ քահանաներին:

-Ծանր մեղք ես գործում, որդեակ Պօղոս:

-Ոչ մի անգամ պաա չեմ պահում:

-Օ՛հ, սոսկալի են մեղքերդ... Չէ՞ որ Աստուած տեսնում է:

-Լաւ, տէր հայր, որ Աստուած տեսնում, լռում է, քե՞զ ինչ է եղել...

☆☆☆

Պըլը-Պուղին արձակ դաշտում առանց ցանկապատի բոստան է անում եւ վրեն մի դռնակ բացում: Մելիք-Շահ-

նագարը դռնակը թողած, միա կողմից մտնում է ներս ու հարցնում:

-Այ Պուղի, էս դռն ինչի՞ համար է, որ բոստանդ ցան-կապատ չունի...

-Մելիքն ապրած կենայ, ուզում եմ անասունները տարբերել մարդկանցից:

-Էդ ո՞նց...

-Շատ պարզ, մարդիկ դռնից են ներս ու դուրս անում, անասունները էլ քեզ նման որտեղից որ կարող են...

☆☆☆

Մելիք Շահնագարը տառապում է գլխացաւից: Դի-մում է բոյոր հեքիմներին, բայց նրանց տուած դեղերը չեն օգնում: Ստիպւած կանչում է Պըլը-Պուղուն, թէ՛ օգնիր, գլուխս տրաքում է:

-Մելիքն ապրած կենայ,- ասում է Պըլը- Պուղին,- գըլ-խացաւի իսկական դեղը մոխիրն է. խառնում ես ջրի հետ, լաւ հունցում, դնում գլխիդ, փալատով պինդ փաթաթում եւ երպէս երկու օր պահում:

Մելիք-Շահնագարը հաւատում եւ այդպէս էլ անում է:

Բայց երկու օրից յետոյ, երբ ետ է տալիս փաթաթանը, տեսնում է գլխին մազ չի մնացել, լրիս մերկ է:

-Պուղի՛, - բղաւում է,- է՞ս է քո հեքիմութիւնը, գլխիս մազ չի մնացել:

-Մելիքն ապրած կենայ,- հանգիստ պատասխանում է Պըլը-Պուղին,- ես ներսն եմ բուժել, դրսի հետ ի՞նչ գործ ունեն:

Հանելուկ



Գտիր վայրէջքի տեղը

Օղաչում թռիչքն արարտելուց յետոյ պատ-մում է իր ընկերոջը յաջող վերադարձի եւ վայրէջքի մասին:

- Ուղղաթիւը որտե՞ղ վայրէջք կատարեց,- հարցը-նում է ընկերը:

- Վայրէջքը կատարեց նախկին ԽՄ տարածքում՝ մի կղզու վրայ:

- Իսկ որտե՞ղ է այդ կղզին,- հարցնում է ընկերը:

- Դժարանում եմ ձեր հարցին կոնկրետ պատաս-խան տալ,- ասում է օղաչուն: -Այդ կղզին գտնուում է հիւ-սիսային կիսագնդում, չեմ սխալի, եթէ ասեմ՝ արեւելեան կիսագնդում կամ մատնացոյց անեմ արեւմտեան կիսա-գունդը:

- Այդ մի կղզին գտնուում է երեք կիսագնդո՞ւմ,- հարցնում է ընկերը:

- Այո՛, մի կղզին երեք կիսագնդում:

Եթէ լաւ նայեք նախկին ԽՄ Ֆիզիկական քարտեզին, անպայման կը գտնեք:

Ասացեք, այդ ո՞ր կղզին է:

ԼՈՅՍ- Պատասխանեք հարցին եւ ներ ստացեք:

Համար 24-ի էջ 19-ում տպագրւած հանելուկի (Տերե՛կ, թէ գիշեր) պատասխանը

- Քամիները ցերեկը փչում են ծովից ցամաք, գիշեր-ները՝ ցամաքից ծով: Այդ քամիները կոչւում են բրիզ-ներ: «Ա» նկարում՝ գիշեր է: «Բ» նկարում՝ ցերեկ:

Երիտասարդի համար

«Քարտեզը մարդկային մտքի մեծագույն գիւտն է»

Կամար Աւետիսեան

Քարտեզի համար առաջնակարգ նշանակութիւն ունի աստիճանացանցը: Դա քարտեզի կմախքն է, որին ամրացած են մնացած տարրերը:

Աստիճանացանցը կազմում է միջօրէ-ականներով և զուգահեռականներով: Այն գծերը, որոնք անցնում են բեւեռից բեւեռ, կոչւում են միջօրէականներ, այսինքն՝ կէսօրայ գծեր, քանի որ դրանցից իւրաքանչիւրի վրայ ամբողջ երկարութեամբ երկրի պատման պատճառով կէսօրը միաժամանակ է լինում:



Քեւեռներից հաւասար հեռաւորութեան վրայ անցնող և բոլոր միջօրէականները հատող գիծը կոչւում է հասարակած: Հասարակածը երկրագունդը բաժանում է հիսիսային և հարաւային կիսագնդերի: Իւրաքանչիւր կիսագնդում հասարակածին զուգահեռ տարած գծերը կոչւում են զուգահեռականներ: Սրանք եւս հատում են միջօրէականները, որից էլ ստացւում է ցանց:

Քարտեզը շրջապատող և իրար ընդհատող միջօրէականներն ու զուգահեռականները կոչւում են աստիճանացանց:

Պետք է միշտ յիշել, որ քարտեզի վրայ միայն աստիճանացանցն է հնարատր դարձնում սահմանելու տեսլ վայրի դիրքը քարտեզի վրայ: Ի դէպ, միջօրէականները ձգւում են հիսիսից հարաւ, իսկ զուգահեռականները արեւելքից արեւմուտք, անկախ այն բանից՝ քարտեզը պատին է փակցւած, թէ փռւած է սեղանին: Միս թէ ինչու քարտեզով աշխատելիս պետք է մէկընդմիջտ հրաժարել «վերեւ», «ներքեւ», «աջ» կամ «ձախ» սահմանումներից և կողմնորոշւել հորիզոնի կողմերով, այն է՝ արեւելք, արեւմուտք, հիսիս, հարաւ:

Ի դէպ, քարտեզի վերաբերող միւս խնդիրները՝ քարտեզների տարբերութիւնը ըստ տեղիտարիաների ընդգրկման, բովանդակութեան և մասշտաբայնութեան, ինքնին առանձին ուսումնասիրման առարկայ են: Քանի որ, դպրոցական պարակտիկայում առատել շատ են գործածական քարտեզների երկու տեսակը՝ Ֆիզիկական և քաղաքական, ապա դրանց մասին հարկատր է մի քիչ հանգամանօրէն խօսել:

Ֆիզիկական քարտեզներում գծագրւում է տեւա երկիրը՝ բնական վիճակում, այսինքն ցամաքները, լեռները, ծովերը, գետերը, լճերը և այլն:

Քաղաքական քարտեզներում անելի շատ ուշադրութիւն է դարձնում երկրի պետական սահմանների, տեղիտարիալ շրէրի, ճանապարհների և բնակավայրերի վրայ:

Դպրոցական աշխարհագրութիւնը սովորաբար սկսւում է կիսագնդերի քարտեզների հետ ծանօթացումից, որոնք պատկերում են ամբողջ երկրագնդի մակերևութը:

Այժմ քաղաքական քարտեզի մասին: Նախ ի՞նչ ենք հասկանում քաղաքական քարտեզ ասելով: Դա հասկանում ենք երկու իմաստով. մէկը, բառի իսկական նշանակութեամբ երկրագնդի քարտեզը, որի վրայ տրւած են գոյութիւն ունեցող պետութիւնները իրենց սահմաններով:

Միւրը, բառի անելի լայն իմաստով, հասկնում ենք քաղաքական աշխարհագրութեան ուսումնասիրութեան առարկան, որպէս տնտեսական աշխարհագրութեան բաղկացուցիչ մաս: Ծանօթանում դրա ձեւաւորմանը, փոփոխութեանը եւ թէ ինչ է իրենց ներկայացնում ներկայումս. այս առումով էլ նա դառնում է ուսումնասիրութեան առարկայ:

Հետագայ տարիներին, բացի կիսագնդերի քարտեզից, արդէն անհրաժեշտ են դառնում աշխարհամասերի, առանձին երկրների ու նրանց առանձին մասերի թէ Ֆիզիկական և թէ քաղաքական քարտեզները:

Քարտեզները, որոնցով սովորում են դպրոցականները, կոչւում են ուսումնական կամ դպրոցական: Գիտական քարտեզներից նրանք տարբերւում են նրանով, որ յարմարեցւած են դպրոցական ծրագրերի պահանջներին: Ինչպէս նաեւ տարիքային առանձնայատկութիւններին և զարգացման աստիճանին:

Մակայն դպրոցական քարտեզները ինքնին տարբեր են թէ մասշտաբով, թէ բովանդակութեամբ և թէ ծանրաբեռնաւորութեամբ ու ձեւաւորմամբ:

Քարտեզները ըստ օգտագործման եզակի լինում են՝ սեղանի և պատի, իսկ ըստ մասշտաբի՝ մեծ, միջին և փոքր: Մեծ մասշտաբի քարտեզները լինում են՝ 1:200.000 և անելի: Միջին մասշտաբի կամ ակնարկային՝ 1:200.000 մինչեւ 1:1.000.000, իսկ փոքր մասշտաբի քարտեզները լինում են 1:1.000.000 անելի փոքր: Օրինակ, վերցնենք մեծ մասշտաբի քարտեզ (1:200.000) այստեղ 1-ը ցոյց է տալիս, որ 1 սմ. հաւասար է 2 կիլոմետրի: Այսպիսով, քանի փոքր է 200.000-ը այնքան մեծ է մասշտաբը:

Ինչ վերաբերում է տեղանունների քանակին և պայմանական նշանների թիւին, ապա այն պայմանաւորւած է մասշտաբով:

Շմարիտ է այն, որ քարտեզը, պատկերատր ասած, լուսագայտուն թիթեղաշերտիկ է: Նա դրոշմում է ժամանակի ընթացքը, որ արտայայտւում են բնակավայրերի, պետութիւնների, ինչպէս նաեւ ժողովուրդների ճակատագրի փոփոխութիւնները: Այս առումով պատմութիւնը քարտեզի վրայ գծագրւում է իր ուղին և հանդէս է գալիս որպէս կենդանի վկայ, որպէս հմուտ պատմող:

Իհարկէ, ամէն մի երկրի կեանքում կատարող փոփոխութիւնները անմիջականօրէն չեն արտացոլւում աշխարհագրական քարտեզի վրայ: Ամենախոշոր քարտեզներն անգամ անկարող են լրիւ պատմել այն, ինչ կատարել է ժողովուրդների ու երկրների կեանքում, թէկուզ ասենք, երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ:

Շմարիտ է արած, որ մարդու կողմից երկրի ուսումնասիրման, իրացման և վերափոխման բոլոր էտապներում քարտեզը եղել է և մնում է անփոխարինելի օժանդակ պիտոյք:

Քարտեզները պատկերատր լեզուով կարող է պատմել պատմական այս կամ այն դարաշրջանի փոփոխութիւնների մասին:

Քարտեզի նշանակութիւնը ընդգծելու համար աշխարհագրութեան դասատուները յաճախ են աշակերտներին յիշեցնում այն մասին, թէ ինչպէս անանի աշխարհագրագէտ Պ.Պ. Մեմեօնով Տեան-Շանսկին ցանկանալով իր որդու մօտ սէր առաջացնել դէպի աշխարհագրութիւնը, նրա մահնակալի վերեւը քարտեզ էր կախել:

Տղան երկար ժամանակ հետեւում էր քարտեզին և այնտեղ կատարում մտովի ճանապարհորդութիւն դէպի հեռաւոր երկրներ: Ի դէպ, նա երբ մեծացաւ՝ դարձաւ նշանաւոր աշխարհագրագէտ:

Շմարիտ է ասւած, որ իսկական աշխարհագրագէտը միշտ ճանապարհորդ է: Դրա համար էլ դպրոցականները աշխարհագրութիւնը ուսումնասիրելով գրքերով ու քարտեզներով, անկատելի կերպով կատարում են ճանապարհորդութիւն «քազկաթռնին մտած» ժիւլ Վեռնի հերոս Օակ Պազանտիի պատկերատր արտայայտութեամբ:



Մօտիկից ծանօթացանք աշխարհագրական քարտեզին նրա նշանակութեանը՝ կապւած աշխարհագրութեան հետ: Միս թէ ինչու ուսուցիչները միշտ յորդորում են աշակերտներին, որպէսզի նրանք աշխարհագրական դասը պարապելիս, ուշադրութեամբ հետեւեն քարտեզին:

Ասենք թէ տրւած է Հնդկաստան թեման: Նախ պետք է Ասիայի քարտեզի վրայ գտնել Հնդկաստանը, ցոյց տալ սահմանակից երկրները, մտովի անցնել Հիմալայները, ապա մտնել Հնդկաստան: Յիշողութեան մէջ վերականգնել այն անունները, որոնց մասին խօսել է ուսուցիչը կամ պատմում է դասագիրքը: Եւ յետոյ անցնել դասի միւս մանրամասնութիւններին, միշտ հետեւելով քարտեզին: ■